



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՃԳՆԱԺԱՄԸ





22  
- 61

# ՃԳՆԱԺԱՄԸ

Գրանները,  
և կը հե-

բացատրուած

ԵՐԵՎ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ձ. Ձ. ԲԸԹ-ՀԸՐՁՈՐՏ-Ի

կողմէ



“The Crisis”  
Armenian

121074

~~1978~~

A I 270

18912



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ	
* * *	
	էջ
Նախարան .....	3
Ամերիկայի Կառավարութիւնը Կրնա՞յ Կանդուծ Մնալ ....	5
Նշույալի վկաները. Ինչո՞ւ Կը Հալածուին ....	29
Սէր .....	50



Հխարհածաւալ տաղնասի տարուան  
1) մը մէջ, Եհովայի Թաղաւորու-  
թեան մասին յայտարարող՝ Դատաւոր  
Րըթչըրֆորտի դրած դրքերէն ու դըր-  
քոյկներէն 22,213,630 օրինակ տարած-  
ւած է: Վերջին տասը տարուան մէջ՝  
անոր հեղինակութիւններէն 130 միլիոնէն  
աւելի օրինակներ աշխարհի ժողովուրդ-  
ներուն մէջ շրջարեւութեան դրուած են:

Հրատարակիչ՝

COPYRIGHTED 1933

AND PUBLISHED BY

WATCH TOWER

BIBLE AND TRACT SOCIETY

International Bible Students Association

117 ADAMS ST., BROOKLYN, N. Y., U. S. A.

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ՝

Անգլիա, Գանատա, Ֆրանսա, Գեր-  
մանիա, Չուեցերիա, Բուժանիա,  
Արճէնթինա, Յունաստան, Հնդկաս-  
տան, Սիւրիա, Եգիպտոս, Թուր-  
քիա, Եւայլն երկիրներ:

Made in U. S. A.

**Պ** Ա.Տ.Ս.Ի ՈՐ Բ Ե Թ Հ Ե ր ր Ֆ ր ր ա ի բ ան աս ի ս օ ս ւ թ ի ւ ն ն Ե ր ր , որ օ ն ք Հ ար ի ւ ր ա ւ ո ր բ է տ ի օ կ ա յ ան ն Ե ր է կ ր Հ Ե ո ար ճ ա կ ու ի ն ա մ է ն շ ար թ ու , ա շ խ ար Հ ա ծ ա ւ ա լ Հ Ե տ ա ր ր ր ք ր ու թ ի ւ ն ս տ ե դ ծ ա ծ Ե ն : Ա յ ս գ ր ք ր յ կ ր կ ր պ ա ր ու ն ա կ է ՝ յ ի շ և ա լ բ ան աս ի ս օ ս ւ թ Ե ան ն ց մ ի ա յ ն Ե ր Ե ք ր : Ի ր պ ատ շ ա ճ ու թ Ե ան ն Հ ա մ ար ՝ գ ր ք ր յ կ ի ն ան ու ն ր Ճ Գ Ն Ա Թ Ա Մ Ը կ ո շ ա ծ Ե ն ք : Ճ Դ ն ա ժ ա մ բ ա ո ր կ ր ն շ ա ն ա կ է դ ար ճ ա կ է տ մ ր , որ ց ո յ ց կ ու տ ա յ վ ա տ թ ար վ ի ճ ա կ ի մ ր վ ա խ ճ ա ն ր , խ ս կ լ ա ւ ա դ ր յ ն վ ի ճ ա կ ի մ ր ն ա լ ս կ դ ր ն ա ւ ո ր ու թ ի ւ ն ր : Բ ո լ ո ր բ ար Ե ա ջ ա կ ա մ մ ար գ ի կ ու ր աս ի ս օ ս ւ թ Ե ա մ ր պ ի տ ի ո ղ շ ու ն Ե ն ա յ ս ա լ խ ի փ ո փ օ խ ու թ ի ւ ն մ ր :

Ե ր կ ար տ ար ի ն Ե ր է ի վ Ե ր ՝ Մ ի ա ջ Ե և ա Ն Ե ան դ ա ց կ ա ո ա վ ար ու թ ի ւ ն ր Հ ար ար տ ու թ Ե ա մ ր ց ո յ ց տ ր ու ա ծ է ժ ս ո ղ վ ու ր դ ի ն ՝ ի ր ր օ ր ի ն ա կ Ե լ ի կ ա ո ա վ ար ու թ ի ւ ն մ ր , Ե Ե ը ս ու ա ծ է թ է ա ն յ ա ւ ի տ Ե ան կ ան դ ու ն մ ն ա լ ու է : Վ Ե ր ջ ի ն տ ար ի ն Ե ր ու տ Ե Ե ո ղ ու թ Ե ան ՝ Ա մ Ե ր ի կ ա յ ի վ ի ճ ա կ ր խ ի ս ա թ ճ ն շ ի չ Ե Ե ան տ ան Ե լ ի դ ար ճ ա ծ է , Ե Ե շ ա տ Ե ր դ ար մ ան ք ո վ Հ ար ց ու ց ա ծ Ե ն թ է ՝ Ի ՞ ն չ է ա ս օ ր պ ատ ճ ա ո ր : « Ա մ Ե ր ի կ ա յ ի կ ա ո ա վ ար ու թ ի ւ ն ր կ ր ն ա յ կ ան դ ու ն Մ ն ա լ » ն ի լ թ ի ն շ ու ր ջ Հ Ե ո ար ճ ա կ Ե ա ծ բ է տ ի օ յ ի բ ան աս ի ս օ ս ւ թ ի ւ ն ր խ ն դ ի ր ր լ խ ի ս ա տ պ ար դ Ե Ե ա ղ դ ու կ Ե ր պ ո վ բ ո լ ո ր լ ր ջ ա խ օ Հ մ ար դ ո ց ու շ ա դ ր ու թ Ե ան կ ր յ ան ճ ն է : Ա յ դ բ ան աս ի ս օ ս ւ թ Ե ան մ է ջ մ ան ր ա մ ան օ ր է ն բ ա ց ա տ ր ու ա ծ է թ է ՝ Ա մ Ե ր ի կ ա յ ի կ ա ո ա վ ար ու թ ի ւ ն ր ի ն չ ո ՛ւ Հ ա մ ար չ կ ր ն ար կ ան դ ու ն մ ն ա լ : Հ ո ն բ ա ց ա տ ր ու ա ծ է ն Ե ր կ ա յ տ ա դ ն ա պ ի ն ու թ շ ու ա ու թ Ե ան ն ց պ ատ ճ ա ո ր , թ է ՝ ի ն չ ու Հ ա մ ար ա տ օ ն ք վ Ե ր ջ դ տ ն Ե լ ու Ե ն , Ե Ե թ է ՝ ի ն չ ու ա տ օ ն ց պ ի տ ի յ ա ջ ո ր դ է լ ա ւ ա դ ր յ ն վ ի ճ ա կ մ ր : Հ ո ն մ է ջ բ Ե ր ու ա ծ ար տ ա յ ա յ տ ու թ ի ւ ն ն Ե ր ր մ ար դ ու մ ր դ ա ղ ա վ ար ր չ է . Հ ա պ ա ան ժ խ ա Ե լ ի փ ա ս տ Ե ր ո վ Հ ո ն ց ո յ ց տ ր ու ա ծ է թ է ՝ Ա մ Ե ր ի կ ա յ ի կ ա ո ա վ ար ու թ Ե ան ճ Դ ն ա ժ ա մ ր ն Ե ր կ ա յ ի ս Հ ա ս ա ծ է : Ս ի ր Ե լ ի ը ն թ Ե ր ց ո ղ , կ ար ժ է որ Ս . Գ ի ր ք դ ի ձ Ե ո ի ն դ դ ու շ ու թ Ե ա մ ր ու ս ու մ ն ա ս ի ր Ե ս ա յ դ բ ան աս ի ս օ ս ւ թ ի ւ ն ր ( տ Ե ս ա յ ս

գրքոյկին բովանդակութիւնը) . մեծապէս պիտի գնահատես հոն մէջ բերուած տրամաբանական եւ զօրաւոր ապացոյցները :

Տասնութ դարերէն աւելի է որ Քրիստոս Յիսուսի ճշմարիտ հետեւորդները կը հալածուին՝ առ Աստուած ունեցած իրենց հաւատարմութեան համար : Ետեր դարմացած են թէ ինչո՞ւ համար այս հալածանքները դանձիրովը ծառայողներուն վրայ : Ներկայիս ճգնաժամի մը հասած ենք, երբ հալածանքները պիտի դադրին եւ ամէնքն ալ պիտի գիտնան թէ Եհովան է Աստուած, եւ թէ՛ Անոր թագաւորութիւնը մօտեցած է : Այս գրքոյկին «Եհովայի Վկաները . ինչո՞ւ կը Հալածուին» վերնագրով յօդուածը ընթերցողին միտքը պիտի լուսաբանէ՝ բուն իրողութեանց մասին եւ պիտի ցուցնէ թէ՛ անոնք որ Աստուծոյ թագաւորութեան համար կը ծառայեն, ճշմարիտ իմաստութիւն ունին եւ կը դործածեն իրենց ունեցած այդ իմաստութիւնը :

Վաղեմի օրերէն իվեր՝ անձնասիրութիւնը կամ եասիրութիւնն է որ տիրած է աշխարհիս եւ շատ մը նեղութիւններու պատճառ եղած է : Անձնասիրութեան ճիշդ հակառակն է՝ սէր կամ անձնուիրութիւն, զոր պատշաճ կերպով սահմանելով՝ կրնանք ըսել թէ սէրը՝ «անձնուիրութեան կամ անեասիրութեան կատարեալ արտայայտութիւնն է» : Եսասիրական իշխանութեանց իբր արդիւնք՝ ճշնաժամի մը հասած ենք . սակայն այդ եսասիրական կաղամկերպութիւնները շուտով պիտի վերջանան եւ անեասիրութիւնն է որ պիտի տիրէ աշխարհիս, տառապող ժողովուրդներուն խաղաղութիւն եւ երջանկութիւն բերելով : Անոնք որ այն ատեն երկրիս վրայ ապրին, արդարութիւն ընել պիտի սորվին (տես այս գրքոյկին վերջին յօդուածը) : Ո՛վ սիրելի հայրդի, կը յուսանք թէ խոհեմութիւնը պիտի ունենաք այս տետրակը ուշի ուշով կարգալ եւ գտնել այն դոհունակութիւնն ու երջանկութիւնը, որ երկար ատենէ իվեր կը փնտռէիր :

Հրատարակիչը

## ՃԳՆԱԺԱՄԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՒԻՒՆԸ

ԿՐՆԱՅ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼ

**Տ**ԱՐԻԻՐ տարիէն աւելի է որ Ամերիկան՝ երկրիս կառավարութիւններուն ամենէն առաջին կարգին մէջ դանուած է: Բնական միջոցներու տեսակէտէն՝ Ամերիկան ներկայիս արեւուն տակ դանուած ամենահարուստ երկիրն է: Միացեալ Նահանգներն ու Մեծն Բրիտանիան՝ եօթներորդ հսկայ աշխարհակալ պետութեան երկու սիւները կը կաղմեն, որ աստուածային մարդարէութեան կողմէ կը նկարագրուի իբրև կրկնակ կամ երկեակ կառավարութիւն մը: Երկու կառավարութիւններն ալ կը դաւանին թէ իրենք Քրիստոնեայ են, եւ «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած պետութեանց դիտաւոր մասը կը կաղմեն, թէև իրապէս՝ Սատանան է իրենց անտեսանելի իշխանն ու աստուածը:

Ամերիկայի կառավարութեան հիմնադիրները՝ իրենց ունեցածէն աւելի մեծ ազատութեան ցանկացին: Անդու իւր ընտանիք իշխաններէ ազատ ու անկախ բլլալու համար՝ անոնք Եւրոպայէն փախան ու Ամերիկեան Հանրապետութիւնը հաստատեցին, եւ մարդիկ երկար ժամանակ այդ հանրապետութիւնը մասնանիչ բրած են իբրև օրինակելի կառավարութիւն մը: Այդ հանրապետութեան նորակաղմ շրջանին՝ անոր քաղաքապետներէն շատերը հայրենասէրներ էին, ինչու որ անոնք իրենց նմանները կը սիրէին, եւ անկեղծօրէն ու քաջարար կրուեցան՝ արդարազատ կառավարութիւն մ'ունենալու համար: Ներկայիս՝ Ամերիկայի կառավարութեան ղեկավարներու շարքին մէջ ճշմարիտ հայրենասէրներ չկան: Այսօր այդ կառավարութեան քաղաքացիներուն համար անկարելի է հանրային պաշտօնեաներ ընտրել, եւ ակնկալել որ անոնք արդար օրէնքներ անցնեն եւ կառավարութեան գործերը վարեն՝ ընդհանուր ժողովուրդին բարօրութեանը համար:



Ամերիկայի կառավարութեան վրայ իշխող մարդկային երեք տեսանկի տարրերն են՝ վաճառականները, քաղաքագէտները եւ կեղծաւոր կրօնականները. իսկ այս երեքին մէջէն ամենազօրաւորն է՝ վաճառականներու կամ դրամատէրներու դասակարգը: Ամերիկայի նախկին քաղաքագէտներուն մէջ կարգ մը աստուածալախ մարդիկ կային՝ որոնք նախատեսելով հզօր ու շահամոլ ուժի մը գալը՝ աղղարարեցին թէ ընչաքաղցները օր մը պիտի փճացնէին ժողովուրդին ազատութիւնները: Այդ աղղարարութեան ուշադրութիւն չընծայուեցաւ եւ այլապէս «Մեծ Վաճառականութիւն» կոչուած շահամոլ առեւտրական տարրը՝ դադատադուր կերպով ու շարունակաբար դէպի իր նպատակակէտին դիմած է: Հսկայ դադանի մը նման՝ անիկա կառավարութեան գրեթէ ամբողջ տեսանկի հարստութիւնը իր ճանկին մէջ առած է: Եւ նոյն տակն՝ տաժանակիր աշխատանքով երկիրը զարգացնող եւ հարստութիւնը արտադրող մարդիկը անիրաւուած ու կողոպտուած են, եւ ներկայիս անոնք հաց կը խնդրեն, եւ այն ալ առատութեան երկրի մը մէջ: Շատ մը ամերիկացիներ այժմ տխրադին կը հարցընեն. «Ամերիկայի կառավարութիւնը կրնա՞յ երկար դիմանալ՝ երբ այսպիսի անարդար վիճակներ դոյութիւն ունին»:

Մեծ Վաճառականութիւնը բնաւ կարեւորութիւն չընծայեր հասարակ ժողովուրդին իրաւունքներուն: 1863-ին մղուած Ամերիկայի Ներքին Պատերազմը (Սիվիլ Ուօր) անոր համար հրահրուեցաւ ու յառաջ տարուեցաւ, որպէս զի այնպիսի վիճակ մ'ստեղծուի՝ որուն միջոցաւ Մեծ Վաճառականութիւնը կարենայ կառավարութիւնը իր ճանկերուն մէջ առնել: Երեւութապէս՝ այդ պատերազմին դրդապատճառն էր՝ Ամերիկան ազատել մարդկային մարմնի ու արեան վաճառականութենէն, սակայն իրական դրդապատճառն էր՝ շահամոլ խումբի մը միջոց հայթայթել, որպէս զի կառավարութեան դրամական ու ամբողջ առեւտրական շահերուն տիրէ: 1917-ին Մեծ Վաճառականութիւնը,

ծայր աստիճան շահամոլ պատճառներով, դուր տեղը եւ յրօրէն Ամերիկեան աղղը Համաշխարհային Պատերազմին մէջ մխրճեց, որուն իրր արդիւնք՝ փոքրամասնութեան մը հարստութիւնն ու զօրութիւնը մեծապէս աճեցաւ, սակայն անդին՝ միլիոնաւոր մարդիկ զերիններու եւ մուրացկաններու վերածուեցան:

Ներկայիս՝ տեսանելի ամէն ինչ՝ Մեծ Վաճառականութեան սեփհականութիւնը դարձած է: Կառավարութեան հասոյթը զեկավարելով՝ Մեծ Վաճառականութիւնը իր սնունտ տակ առած է դրեթէ ամբողջ անշարժ կալուածները, երբ անդին հարիւր հազարաւոր պարկեշտ դործաւորներ իրենց արդար փաստակով դնած տուներն ու հողերը կը կորսընցընեն: Մի քանի հատ բաղմամբիլիոնատէր մարդիկ, ի նպաստ իրենց՝ հողադործներուն արտադրած բերքերուն զինները կը հաստատեն, ու այդպէս հողադործները կը կողոպտուին ու դործաւորները սովամահութեան կ'ենթարկուին, եւ այն ալ աշխարհիս ամենահարուստ երկրին մէջ:

Մեծ Վաճառականութիւնը տէրն է այն նաւերուն որ ծովերը կը ճեղքեն, նաև անոնց՝ որ օդին մէջէն կը թռչին: Ան՝ տէրն է ու կ'իշխէ երկաթուղիներուն եւ փոխադրութեան ուրիշ զանազան միջոցներուն: Մեծ Վաճառականութիւնը ձեռք բերած է հանրային փոխադրական ընկերակցութիւններու նախադասեալ երաշխաւորութիւնները, մինչ հասարակ ժողովուրդները՝ իրենց ձեռքին մէջ ունին նըլազ փափաքելի արժեթուղթերն ու երաշխաւորութիւնները: Երբ երկաթուղիները վերջերս ճնշման ենթարկուեցան իրենց նախադասեալ երաշխաւորութիւններուն դրամական տոկոսը վճարելու համար՝ Մեծ Վաճառականութիւնը՝ դրամատուններուն սառած պարտակալուածները (Էսէքս) լուծանելու եւ առեւտուրը շուտով խթանելու պատրուակաւ՝ ըստիպեց որ Ամերիկայի կառավարութիւնը դրամատուններուն հարիւր միլիոն տոլարի վճարում մ'ընէ. սակայն՝ փոխանակ դրամը այդ նպատակին համար դործածելու՝ Մեծ Վաճառականութիւնը անմիջա-



պէս լւրացուց այդ ամբողջ հարիւր միլիոն տղա-  
րը եւ զանիկա զործածեց իր ձեռքին մէջ զտնուած  
նախադասեալ երաշխաւորութիւններուն տոկոսը  
վճարելու համար :

Մեծ Վաճառականութիւնը, որ խիստ սակաւա-  
թիւ անհատներէ կը բաղկանայ, տէրն է ու կ'իշխէ  
հեռազրի ու հեռախօսի դժերուն, բէտիոյի, ելեկ-  
տրականութեան եւ ուժի դժերուն, ու ան տէրն է  
եւ կ'իշխէ վառելանիւթ արտադրող հանքերուն եւ  
շինութեանց ատաղձներուն՝ զորս ամէն մարդ պար-  
տաւոր է զործածել : Ան՝ տէրն է ու կ'իշխէ դրամա-  
տուններուն եւ անոնց մէջ եղած դրամի մեծագոյն  
մասին : Ան՝ իր ձեռքին մէջ ունի սոկիլին մեծագոյն  
մասը՝ որ իրաւունքով կառավարութեան կը պատ-  
կանի : Այդ միեւնոյն անձնասէր շահամոլները տէրն  
են ու կ'իշխեն՝ զործարաններուն եւ վաճառականա-  
կան հսկայ հաստատութիւններուն :

Մեծ Վաճառականութիւնը իրեն համար կը բա-  
նեցնէ երկրին ամենախտրադէտ փաստարանները, ո-  
րոնք պայմանադրութիւնները միշտ ի շահ իրենց  
պաշտպանեալներուն կը դրեն, եւ հասարակ ժողո-  
վուրդը պարտաւորուած է թափթփուքներով դոհա-  
նալ : Կառավարական ամէն ճիւղ Մեծ Վաճառակա-  
նութեան կողմէ ասպականուած է եւ անոր անպատ-  
շաճ ազդեցութեան տակ կը դտնուի : Ան՝ Ամերի-  
կայի երկու խոշոր քաղաքական կուսակցութիւննե-  
րուն վրայ կ'իշխէ, եւ կ'անուանէ ու իր հաճոյքին  
համաձայն պաշտօնի կ'ընտրէ հանրային այնպիսի  
մարդիկ՝ որոնք ամենէն աւելի լաւ կերպով պիտի  
կրնան ծառայել իր ետասիրական շահերուն : Մեծ  
Վաճառականութիւնը կ'իշխէ բանակին ու նաւատոր-  
միղին, թնթանօթներուն եւ ռազմամթերքին, եւ  
կառավարութեան ոստիկանական ուժին :

Մեծ Վաճառականութիւնը տէրն է ու կ'իշխէ՝  
Ամերիկայի դրեթէ բոլոր առեւտրական ընկերակ-  
ցութիւններուն : Այդ հսկայ ընկերակցութիւններուն  
զործաւորները, պարզ խօսքով, իրենց քթին անցը-  
լած օղակներ ունին, եւ անոնք չեն համարձակիր  
իրենց անձերը իրենցը կոչել : Անոնք պարտաւոր-

ւած են կա՛մ Հնադանդելու շահախնդիր մարդոց՝ որոնք ելեւմտական հղօր ջոջերն են, եւ կամ իրենց դործերը կորսնցնելու: Անոնք ինքզինքնին եւ իրենց բնտանիքները սնուցանելու եւ հագուեցնելու համար կարօտ են իրենց թռչակներուն. ուստի անոնք Մեծ Վաճառականութեան գթութենէն կախում ունին եւ այդպէս սարուկներ եղած են:

Մեծ Վաճառականութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով տէրն է կամ կ'իշխէ Ամերիկայի գրեթէ բոլոր լրագիրներուն ու պարբերաթերթերուն, եւ այդ դործակալութիւնները իրրեւ գաղափարածաւալներ (փրօփակամտիստ) կը ծառայեն Մեծ Վաճառականութեան եւ անոնց քաղաքական ու կրօնական գաշնակիցներուն համար: Միեւնոյն անձնասէր եւ շահամոլ ոգիէն տարուած են՝ հաւատուրաց կղերականները, որոնք Աստուծոյ Խօսքը ծախու կը հանեն՝ ժողովուրդը տղիտութեան մէջ եւ իշխող ուժերուն հպատակ պահելու համար: Այսպէս որոշ կերպով կը տեսնուի թէ՛ կառավարութեան ուժը կեդրոնացած է շատ պղտիկ փոքրամասնութեան մը ձեռքին մէջ:

Անցելոյն՝ քաղաքագէտները ժողովուրդը ըզդուշացուցին այն վտանգին մասին՝ որ դորութիւնը մի քանի մարդոց ձեռքին մէջ կեդրոնանալէն առաջ պիտի դար: Թէպէտեւ ժողովուրդը լսեց այդ նախազգուշական աղբարարութիւնը, եւ անոնցմէ շատերը զղացին վերահաս վտանգը, սակայն անոնք կարող չեն եղած արդիւլելու այն՝ ինչ որ տեղի ունեցած է: Ներկայիս հասարակ ժողովուրդին ձեռքերն ու ոտքերը կապուած են: 1917-ին՝ Ամերիկայի ժողովուրդին ախրող յափշտակիչ տարրը սա յանկերդը յառաջ բերաւ. «Պատերազմը՝ աշխարհը ժողովրդապետութեան համար ապահով վայրի մը պիտի վերածէ», եւ յետոյ՝ իր գաղափարածաւալ մամուլին եւ կեղծաւոր կղերներուն միջոցաւ՝ այդ ստալոգ յանկերդը հնչեցնել տուաւ Ամերիկայի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Ներկայիս՝ Մեծ Պատերազմէն 15 տարի վերջ՝ ժողովրդապետութիւնը վերցըւած է երկրիս վրայէն: Ամերիկայի վաճառականու-

Թեան վրայ տիրող այդ սակաւաթիւ մարդոց մէջ ճիշդ ներկայիս միացեալ շարժում մը կայ՝ Ամերիկան դիկտատորի (տիքթէյքըր) մը իշխանութեան տակ դնելու, որ կը նշանակէ մէկդի քշել սահմանադրական ամէն օրէնք եւ սարտադրել այնպիսի հրամաններ՝ որոնք դիկտատորը անհրաժեշտ կըրնայ համարել: Հանրային մամուլին հրահանգ տրուած է՝ այդ քայլին խկասպէս առնուելէն եւ դիկտատորական զօրութեան յայտնուելէն առաջ՝ ժողովուրդը դիւանադիտօրէն դաստիարակել դիկտատորի մը անհրաժեշտութեան մասին: Թերթերուն մէջ վերջերս նկատած ըլլալու էք՝ արտայայտութիւններ՝ որոնցմով Ամերիկայի կառավարական գործերուն ղեկավարութեանը համար դիկտատոր մը կը ջատագովուի՝ զգուշաւոր թաքուն լեզուով մը: 1932, Յունիս 25 թւակիր հանրածանօթ պարբերաթերթէ մը հետեւեալը մէջ կը բերեմ.

Զինուորական ուժի բնոյթն ունեցող դիկտատոր մը ի՞նչ կրնայ ընել: Անիկա նախ կարելի ամէն ճիշդ պիտի թափէ՝ երկրին ապագային նկատմամբ հանրային նշանաւոր մարդոց (մէն ալ ըֆֆէրզ) վստահութիւնը աւելցնելու, անստուրի մարդոց ամէն տեղ հասկցնելու թէ՛ կառավարութեան մտադրութիւնն է անոնց քաջալերութիւն, աջակցութիւն եւ պաշտպանութիւն ընծայել՝ իրենց ձեռնարկելիք ամէն գործերուն մէջ:

Ասիկա՝ մի քանիներու շահուն համար եւ շատերու ընդհանուր բարօրութեանը միաստող աներևս արտայայտութիւն մըն է: Մեծ Վաճառականութիւնը Ռաշինկթընի մէջ վճարուած գաւթարաններ (լապիսթ) կը պահէ, եւ այդ գաւթարանները զիրենք վարձողներուն մասնաւոր օգտին համար տեղեկութեան դիւան մըն ալ կը պահեն: Տեղեկութեան այդ դիւանէն՝ Մեծ Վաճառականական ընկերակցութիւններու վարչութեանց ատենապետներուն նամակ մը կ'երթայ ամէն շաբթու: Այդ թղթակցութիւններուն մէկէն, որ 1932, Մայիս 14 թուականը կը կրէ, հետեւեալ մէջբերումը կ'ընեմ.

Հետզհետէ յայտնի կ'ըլլայ թէ՛ միախառն (ֆօրմշըն) կառավարութեան տեղը ուրիշ միջոց մը պէտք է որ ստեղծուի՝ Ծերակոյտի ժողովներուն առկախումէն յետոյ կացութիւնը վա-

րելու համար: ... Մէկէ աւելի ծրագիրներ կան, սակայն սա մէկ զազափարը կը շքէ՝ Ուաշինկթընի մէջ երկոտասնեակ մը կամ աւելի մարդոց խումբ մը հաւաքելու, կամ անմիջական կոչման ենթակայ ընկելու: ... Դիկտատորութենէն պիտի ըզգուշացուի, որ շարթէ շարթ աւելի մեծ չափով կը ջատագոյփուի, բայց դիկտատորութեան մաս մը գործնական արժանիքները ձեռք պիտի բերուին: Գոնէ՛ յիշեալ զազափարին ետին դանուած յոյսը ստիկա է, որ պատերազմ-ժամանակուան Ազգային Պաշտպանութեան Խորհուրդին միջոցաւ ներկայացուած կարգադրութեան մէկ յարմարումն (էտէփէյշըն) է: ... Գործնական մէկ առարկութիւնը այն է թէ՛ հասարակութիւնը կրնայ անտեղի կերպով թունդ ելլել՝ երբ խորհրդակիցներու ժողով մը հրաւիրելու մասին ահնարկութիւններ կ'ըլլան: ... Մենք պատճառ ունինք հաւատալու թէ այս ծրագիրը պիտի իրականանայ, եւ կանխաւ խորհուրդ կու տանք ձեզի (առեւարական գործերու գլուխը դանուողներու), որ բարի նշան մը նկատէք զայն:

Այս տեղեկութիւնը կը հայթայթուի մի միայն առեւտրական ընկերակցութեանց գլուխը դանուողներու համար, եւ ոչ թէ հրատարակուելու նպատակաւ: Այս դադանի թղթակցութիւնները կանխաւ երեւան կը բերեն թէ Մերակոյտը ի՛նչ ընթացք պիտի բռնէ, ի՛նչ օրինադիւծեր պիտի անցնէ եւ ի՛նչ պիտի չանցնէ. եւ երբ հանրային մամուլը կը քըննենք՝ կը տեսնենք որ այդ գուշակութիւնները կ'իրականանան: Ասիկա մէկն է այն ասպցոյցներէն՝ թէ հանրային պաշտօններու ընտրուած մարդիկ՝ աւարառու շահադէտները կը ներկայացնեն, եւ ո՛չ թէ հասարակ ժողովուրդը: Այս եւ ուրիշ իրողութիւններ ցոյց կու տան թէ իշխողները մեծապէս մտահոգուած են եւ մեծ վախով առաջ կ'ընթանան:

Ես քաղաքական ոեւէ կուսակցութեան կողմը չէ որ կը բռնեմ, հապա պարզապէս իրողութիւններուն վրայ է որ ուշադրութիւն կը հրաւիրեմ, եւ վաշրիկեան մը յետոյ մէջ պիտի բերեմ ճիշդ այս ժամանակուան ահնարկող Նհովա Աստուծոյ մարգարէութիւնը, որ ներկայ նեղութեան պատճառն ու միակ դարմանը երեւան կը բերէ: Սաղմոսաց Բ. գլխուն լեզուովը՝ Ուաշինկթընի կառավարութեան առաջնորդներէն կը խնդրեմ որ Նհովա Աստուծոյ Թօսքին ուշադրութիւն տան, եթէ կ'ուզեն իմաստուն ըլլալ: Ես նմանապէս ժողովուրդէն կը խընդ-



րեմ որ մտիկ ընեն ու նկատի առնեն թէ Աստուծոյ Թօսքը ի՛նչ կ'ընէ այս խնդրոյն շուրջ, ինչու որ Սուրբ Գրոց վսեմ ճշմարտութիւնները, որոնք այնքան կենսական են ներկայիս ամենուն համար, բէտիոյի միջոցաւ ձեզի հաղորդելու պատեհութիւնը կրնայ ժամանակուան մը համար դադրել՝ դիկտատորի մը իշխանութեան ատեն:

Եհովայի Վկաները թէ՛ բէտիոյով եւ թէ՛ դռնէ դուռ այցելելով շարունակաբար ուշադրութիւն հրաւիրած են Ս. Գրոց վկայութեանը, որ ցոյց կու տայ թէ Եհովա Աստուած առաջուց նախաձայնած էր ներկայիս աշխարհի վրայ եղած անձկութեան ու տագնապի՝ եւ անոնց պատճառին ու դարձանին մասին: Այդ բանն ընելու անոնց միակ նպատակն է՝ Եհովայի պատուէրներուն հնազանդելով՝ ժողովուրդին ծանօթութիւն ընծայել՝ բուն իսկ իրենց բարելաւութեանը համար (Եսայ. ԽԳ. 9-12, Զ. 1-11): Ծճարտութեան մասին՝ ժողովուրդին այսպէս ծանօթութիւն տալու անոնց ջանքերուն սաստիկ հակառակած են վարձկան կղերները, որոնք նմանապէս ոստիկանական իշխանութեան զորձակցութիւնը ձեռք բերած են ժողովուրդը տէտ պահելու համար: Այժմ, այս պատեհութեամբ կը թելադրեմ թէ՛ ժողովուրդին առաջնորդներուն եւ թէ՛ ժողովուրդին, որ մտիկ ընեն դարեր առաջ Ս. Գրոց մէջ գրի առնուած Եհովա Աստուծոյ ձայնին, որ ներկայ վիճակներու մասին կը խօսի եւ փախուստի ճամբան կը մատնանչէ: Մտիկ ընէք կամ ոչ, դո՛ւք էք պատասխանատուն:

Լաւ դիտենք թէ՛ վախն է որ կը տիրէ գրեթէ ամենուն վրայ: Վախի ենթարկուած են կառավարական պաշտօնեաներ, դրամատան պաշտօնեաներ ու զորձաւորներ, վաճառականներ ու հողօգործներ, քաղաքական զորձերով զբաղողներ, կղերներ եւ հասարակ ժողովուրդներ: Ինչո՞ւ համար է որ իշխողներուն մէջ այսքան մեծ վախ ու մտահոգութիւն եւ ժողովուրդին մէջ ալ ամէն տեղ անձկութիւն կը տիրէ: Եհովա Աստուծոյ Թօսքը Ղուկասու ԻԱ. գլուխին մէջ յայտնած էր թէ՛՝ ճշնաժամային

ճիշդ այս ժամանակը պիտի դար աշխարհի վրայ, եւ թէ անոր հասած ժամանակ «երկրի վրայ ազդերը ապշութեամբ պիտի տազնային, ... մարդոց սիրտերը պիտի նուազին իրենց վախէն եւ աշխարհի վրայ դալու բաներուն սպասելէն, վասն զի երկինքի դօրութիւնները պիտի շարժին»: «Երկինքի դօրութիւնները» բառերը կ'ահնարկեն Սատանային անտեսանելի կազմակերպութեան, որուն անդամները դիտեն թէ մեծ ճշմարտամբ հասած է: Ի՞նչ է այս վախին ու մտահոգութեան պատճառը: Եհովա Աստուծոյ Պօսքը այդ հարցման կը պատասխանէ պարզ լեզուով մը: Ուրեմն ինչո՞ւ թոյլ չտալ ժողովուրդին որ այդ տրուած պատասխանին տեղեկանայ: Ատոր պատճառը այն է որ, այս ամբարիշտ աշխարհի անտեսանելի իշխանը եղող Սատանան կը ցանկայ ժողովուրդը Եհովայի նկատմամբ տղէտ պահել ու Անկէ հեռացնել, եւ եթէ Եհովայի Վկաները համարձակին թաղաւորութեան պատգամը ժողովուրդին տանիլ, անոնք կը ձերբակալուին ու բանտ կը դրուին:

Մեծ Վաճառականութեան պատկանող մարդիկ եւ անոնց «դօրաւոր-բազուկ դունդ»-ը (պարզ կամ դադանի ոտտիկաններ) Աստուծոյ առջեւ պախարակելի են՝ Եհովայի Վկաներուն կողմէ՛ ճշմարտութիւնը ժողովուրդին քարոզուած ատեն արգելք հանդիսանալուն համար. սակայն շատ աւելի պախարակելիներն ու պատասխանատուները կղերներն են, ինչու որ այդ «զղեստաւոր սպարոններ»-ը ինքզինքնին իբրեւ Ս. Գրոց ուսուցիչները ներկայացուցած են, եւ սակայն մերժած են Ս. Գիրքը ժողովուրդին բացատրել, եւ դայն բացատրողներուն ալ դէմ կեցած են: Ուրեմն ինչո՞ւ համար այժմ աշխարհի, ինչպէս նաեւ Ամերիկայի նման դեղեցիկ երկրին, վրայ եկած է տաղնապի ու անձկութեան այս վիճակը: Յայտ. ԺԲ. դուխին մէջ Եհովա կը պատասխանէ այդ հարցման. «Վա՛յ երկրի ու ծովու բնակիչներուդ, վասն զի Բանասարկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ դիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ»: Սատանային աշխարհը



վերջացաւ 1914-ին, եւ այդ բանը նկատելի եղաւ Համաշխարհային Պատերազմին սկսելովը: Ինչպէս որ Յհովան նախաձայնած էր՝ Սատանան այդ ատեն երկինքէն վար նետուեցաւ, եւ ատկէ քիչ ժամանակ վերջն է որ անոր կաղձակերպութիւնը վերջնականապէս պիտի ոչնչացուի եւ Յհովայի արդարադատ կառավարութիւնը պիտի հաստատուի: Երբեք չէ եղած ասոր նման ճշմարտութիւն մը՝ որուն դիտցուելին ու հասկցուելը ժողովուրդին համար այնքան կարեւոր ըլլար:

Երկար դարերէ իվեր է որ Սատանան այս աշխարհի անտեսանելի իշխանը եղած է: Ան մարդիկը ճշմարտութեան նկատմամբ կուրցուցած եւ իր հրամանը գործադրել տալու համար ուրիշներուն վրայ նենգամտօրէն աղբեցութիւն բանեցուցած է: Սատանան հեղինակն ու կաղձակերպիչն է աշխարհին տիրող Մեծ Վաճառականական դրութեան: Նա վաճառականութիւնը, քաղաքադիտութիւնը եւ կրօնքը գործածած է մարդկային ազգը բացարձակապէս իր իշխանութեան տակ առնելու եւ Յհովա Աստուծոյ անունն ու Խօսքը վարկարեկելու նպատակաւ: Այդ պատճառաւ՝ Ս. Դրքին մէջ գրուած է. «Իոյր աշխարհ չարին մէջ է» (Ա. Յովհ. Ե. 19): Ըսուած է նմանապէս թէ Սատանան այս աշխարհի աստուածը կամ անտեսանելի իշխանն է, եւ թէ նա է որ ճրջմարտութեան նկատմամբ ժողովուրդը կը կուրցնէ (Ա. Կորնթ. Դ. 4): Նա դանազան միջոցներ ի գործ կը դնէ իր նպատակը գլուխ հանելու համար: Սատանան դիտնալով թէ իր վերջին դիմադրութեան ժամանակը կը մօտենայ՝ ներկայիս յուսահատական ճիգ կը թափէ մարդկային ամէն արարած աս ու դողի մատնելով իր բանակին մէջ քշել՝ ընդդէմ Յհովայի ու Անոր թաղաւորութեան: Մօտ ատենէն Յհովան պիտի ոչնչացնէ Սատանան ու անոր ամբողջ կաղձակերպութիւնը:

Սակայն Աստուած ինչո՞ւ համար Բանասերկու Սատանան վաղուց չոչնչացուց եւ այդպէս աշխարհիս մէջ դոյուութիւն ունեցած այսքան ամբարշտութեանց առջեւը չառաւ: Կը խնդրեմ որ համբերու-

թեամբ մտիկ ընէք, մինչ Ս . Գրոց տուած պատասխանը կը ներկայացնեն՝ ձեզի: Երբ Սատանան տեսաւ Եզեմի մէջ ընակող կատարեալ այրն ու կինը, նա դիտէր որ անոնք աճելու եւ երկիրը լեցնելու զօրութեամբ օժտուած էին . ուստի առաջին անգամն ըլլալով՝ վաճառականութեան ողին անոր շահամուլ մտքին մէջ ծնունդ առաւ: Նա տեսաւ որ, մարդկային ազգը իր ճանկին մէջ առած ըլլալով, ապագային կրնար վաճառականութենէ, քաղաքագիտութենէ եւ կեղծ կրօնքէ բաղկացած վիթխարի մեքենայութիւն մը կառուցանել, եւ այդպէս ժողովուրդը իր իշխանութեան տակ բերել ու Եհովա Աստուծոյ անունը վարկարկելով՝ ինքզինքը ամենակարող մէկն ընել: Այդ պատճառաւ՝ նա աստարէզ կարգաց Եհովայի՝ որ եթէ կրնայ, երկրի վրայ զնէ այնպիսի մարդիկ՝ որոնք աննպաստ պայմաններու տակ հաւատարիմ ըլլան Իրեն: Եթէ Եհովա Աստուած մերժէր այդ մարտահրաւէրը եւ անմիջապէս սպաննէր Սատանան, այն ատեն պատեհութիւն պիտի չըլլար բոլոր արարածոց ապացուցանելու թէ Եհովա Աստուած զերազոյն էակն է, թէ Անիկա կեանք եւ ուրիշ օրհնութիւններ Պարզեւտոյն է, եւ թէ Անոր անունը ամենէն վեր եւ փառարանութեան արժանի է: Եհովա Աստուած ընդունեց մարտահրաւէրը եւ թոյլ տուաւ Սատանային որ յառաջ անցնի ու ջանայ ի դորձ զնել իր յոխորտանքը: Նոյն ատեն՝ Եհովան յայտնեց Սատանային ու մարդոց թէ՛ նախատահմանուած ժամանակը հասնելուն պէս Ինք պիտի ոչնչացնէր Սատանան ու անոր բոլոր դործերը (Ծննդ . Գ . 15-17, Երբ . Բ . 14, Ա . Յովհ . Գ . 8-- տես անդլ . Լայթ դրքին Բ . հատորը): Սատանային առաջին աշխարհակալ պետութիւնը վաճառականական եւ դինուորական Եզիպտոսն էր: Եհովան Իր ընտրեալ Իսրայէլ ժողովուրդը այդ երկրին մէջ պանդխտանալու զրկեց: Եզիպտական կառավարութիւնը ճնշեց Աստուծոյ ժողովուրդը: Որոշեալ ատենին՝ ու եզիպտական իշխանները լիովին ազդարարելէ վերջ՝ Եհովան Իր ժողովուրդը ազատեց այդ բռնակալ երկրէն եւ ո-


չընչացուց եղիպտացի իշխանները: Ս. Գիրքը որոշապէս ցոյց կու տայ թէ ատիկա պատկերացում մըն էր այն բանին՝ զոր Յհովան մօտ ատենէն պիտի ընէ. Սատանային եւ աշխարհին տիրող անոր ամբողջ կազմակերպութեան: Եղիպտոսի Փարաւոն թագաւորը պատկերացուց Բահսարկու Սատանան, եղիպտական ազգը պատկերացուց աշխարհի ներկայ ազգերը, իսկ Իսրայելացիներն ալ պատկերացուցին այն օրինապահ մարդիկը՝ որոնք կը ցանկան Սատուծոյ եւ արդարութեան կողմն ըլլալ: Այժմ Ս. Գրեց լեզուովը մասնաւորապէս կը պատասխանեմ այն հարցման թէ՛ Սատուած ինչո՞ւ թոյլ տուած է որ Սատանան ու անոր ամբարիշտ գործիչները այսքան երկար ատեն զոյութիւն ունենան, եւ Սատուած այդ պատասխանը Մովսէսի դրել տուաւ Ելից Թ. 16-ին մէջ, եւ ատիկա է. «Եւ այն պատճառաւ քողի մնալու թոյլ տուի՝ որ իմ զօրութիւնս ցոյց տամ քեզի եւ որպէս զի իմ անունըս բովանդակ երկրի վրայ յայտարարեն» (ըսաւ Լիպըր-ի թարգմ.): Գերակայութեան հարցը վերջնականապէս վճռելու համար՝ Յհովա Սատուած Սատանային թոյլ տուած է իր ամբարշտութեան մէջ յառաջ ընթանալու, մինչեւ որ հասնի դանիկա եւ անոր ամբարիշտ կազմակերպութիւնը ոչնչացնելու ժամանակը եւ այդպէս ցոյց տրուի թէ Յհովան է գերազոյն եւ յաւիտենական Սատուածը: Այդ դարձակէտային օրը ա՛լ հասած է, եւ Յհովայի Վկաները Անոր անունը կը յայտարարեն բովանդակ երկրիս վրայ:

Յհովան երկինքն ու երկիրը Ստեղծողն ու կեանք Պարգեւողն է: Անոր բոլոր ճամբաները արդար եւ ուղիղ են, եւ յաւիտենական կենաց ու երջանկութեան օրհնութիւնները մի միայն Յհովայի ձեռքէն կարելի է ստանալ: Եհովա Սատուծոյ անունը ամենակարեւորն է: Անոր անունը ջատագովելու եւ մարդոց մտքին մէջ Անոր անունն պատշաճ ըմբռնու՞մը եւ գնահատութիւնը հաստատելու ժամանակը եկած է: Սատուծոյ անունը նախատույններն են՝ Սատանան եւ անոր վաճառականական հըս-

կայ կազմակերպութիւնը, ասոնց աջակիցն ու խրախուսիչն ըլլալով անոր քաղաքական դօրութիւնը, ինչպէս նաեւ կրօնական այն խարերայ եւ կեղծաւոր առաջնորդները՝ որոնք աշխարհի տառապանքին պատասխանատուութիւնը եհովա Աստուծոյ վրայ կը բեռցնեն անիրաւօրէն: Սատանային կազմակերպութիւնը ժողովուրդը կը ճնշէ, եւ նոյն ատեն քարոզիչները կամ կղերները կ'ըսեն ժողովուրդին թէ՛ Ամերիկեան ազգը եւ անոր նման ուրիշ ազգեր աստուածային իրաւատութեամբ կը տիրեն, ասոնք Քրիստոնեայ ազգեր են եւ հետեւաբար Աստուծոյ կամքին համաձայն է որ իշխանութիւն կը բանեցնեն: Կղերականութիւնը այս եւ ուրիշ պատճառներով իրապէս կը ներկայացնէ Սատանան ու անոր կազմակերպութիւնը՝ թէեւ կը յայտարարէ թէ ղԱստուած կը ներկայացնէ: Որպէս զի ժողովուրդը ճշմարտութիւնը լսէ եւ այս խնդրոյն մասին անձամբ վճիռ տայ, վերջերս Ամերիկայի բոլոր կղերներուն հրաւէր կարգացի՝ որպէս զի իրենց ամենէն կարող մարդն ընտրեն՝ այս խնդրոյն շուրջ բէտիոյի միջոցաւ անոր հետ հրապարակաւ վիճաբանելու համար: Կղերներուն երեսին նետուած ըլլալով ղԱստուած սխալ ներկայացուցած եւ Սատանային ծառայած ըլլալու ամբաստանութիւնը՝ իրենք պարտաւոր են կամ առջ դալ եւ կատարուած ամբաստանութեան սխալ ըլլալը ցոյց տալ, եւ կամ՝ թերահալով այդ բանին մէջ՝ անոնք պարտաւոր են դադրել ինքզինքնին Աստուծոյ Ոտքին ուսուցիչները ներկայացնելէ: Եհովան զուշակեց այսպիսի մարտահրաւէրի մը հետեւանքը եւ կղերներուն բռնելիք դերքը՝ երբ Նա Իր Երեմիա մարդարէին ստպէս դրել տուաւ. «Բարեւոյնի (Սատանային կազմակերպութեան) զօրաւոր մարդիկը պատերազմելէն դադրեցան, բերդերու մէջ բնակեցան. ուժերնին կտրեցաւ, կիներու պէս եղան» (Երմ. ՄԱ. 30): Թող ողջամիտ ժողովուրդը ուշադրութիւն ընծայէ այս իրողութեան:

Իարերու ամենամեծ ճգնաժամը ներկայիս աշխարհի, ինչպէս նաեւ Ամերիկեան, կառավարութեան, վրայ է: Սատանային երկրային կառավար-

A  
18912





բութեան ուժը ներկայիս փոքրամասնութեան մը ձեռքին մէջ կեդրոնացած է: Նոյն իսկ ներկայ իշխողները տեսնելով թէ վիթխարի ճգնաժամ մը կը մօտենայ՝ մեծ վախի ու մտատանջութեան մէջ են. ուստի անոնք շատ մը ծրագրերներ կը յղանան ու կը յայտարարեն: Բայց այդպիսի ծրագրերներ չեն կրնար աղդերը իրենց ներկայ երկսայրի դժուարութիւններէն ազատել: Իշխողներուն պատշաճօրէն տեղեկութիւն ու ազդարարութիւն տրուած է թէ Նհովայի թագաւորութիւնը եկած հասած է: Բայց անոնք մերժած են ուշադրութիւն ընծայել: Անոնք Ասաուծոյ Սօսըը անտես կ'ընեն եւ կը շարունակեն իրենց անկատար ծրագրերներն ի դորձ դնել, եւ անոնք պիտի շարունակեն մէկը միւսին ետեւէ փորձել դանոնք, որոնց ամէնն ալ շուրջ պիտի իյնան: Ես կը համարձակիմ այն կարծիքը ներկայացնելու թէ մօտ ատենէն՝ Ամերիկեան կառավարութիւնը դիկտատորի մը իշխանութեան ներքեւ պիտի ըլլայ, իրեն օգնական ունենալով՝ Մեծ Վաճառականութեան ջոջերուն կողմէ ընտրուած եւ ղեկավարուած խորհրդատուներու խումբ մը: Ատիկա զինուորական իշխանութիւն մը պիտի ըլլայ, եւ պիտի բռնադատէ ժողովուրդը որ իրեն հպատակի:

1917-ին՝ Ամերիկայի միլիտնաւոր երիտասարդները զինուորական շարքերու մէջ քլուեցան Մեծ Վաճառականութեան ստիպումովը: Ատոնցմէ աւելի քան հարիւր հազարին կենաց արիւնը Փրանսական հողին վրայ թափուեցաւ՝ ոտքի տակ առնուելով Նհովայի յաւիտենական ուխտը (Ծննդ. Թ. 2-4, տես նաեւ 1931-ի ԴԻՏԱՐՄԱՆ-ին թիւ 5-ը): Ուրիշ հազարաւորներ ալ՝ Ամերիկա վերադառնալով՝ ինքզինքնին դտան անդորձ եւ իրենց անձն ու բնտանիքները ապրեցնելու միջոցներէ զուրկ: Մեծ Պատերազմէն 14 տարի վերջ (1932-ին), այդ հին զինուորներէն (վէթ-երան) հազարաւորներ ամխսներով Ուաշինկթընի մէջ բանակ դնելով կառավարութենէն խնդրեցին որ զիրենք ու իրենց սովահար դաւակները սնուցանէ: Անոնք հայ խնդրեցին ու փոխարէնը քար ստացան. անոնք միւս խնդրեցին բայց մահարներ իժ

մը ստացան : Շատեր կը հարցնեն . «Ամերիկայի կառավարութիւնը կրնա՞յ երկար դիմանալ այսպիսի պայմաններու տակ» :

Միթէ յեղափոխութիւնը պիտի կրնա՞յ ազատել ժողովուրդը եւ ներկայ երկսայրի դժուարութեանց մէջէն դուրս քաշել Ամերիկայի կառավարութիւնը : Ես զօրաւոր չեշտով կը պատասխանեմ . Ո՛չ : Ամերիկայի մէջ չկա՛յ՝ յեղափոխութիւն մը յաջող կերպով առաջնորդելու կարող անձ մը : Այդպիսի բանի մը ձեռնարկելը տխմարութենէ ալ աւելի վատ բան մը պիտի ըլլայ : Ստանան ջանացած ու յաջողած է կառավարութեան զօրութիւնը Մեծ Վաճառահանութեան ու անոր դաշնակիցներուն ձեռքին մէջ կեդրոնացնել : Բանակն ու նաւատորմիդը եւ «զօրաւոր-բազուկ դունդ»-ը Մեծ Վաճառահանութեան հրամանը ի դարձ կը դնեն եւ ժողովուրդը անկարողութեան պիտի մատնուի անոնց առջեւ : Եթէ յեղափոխութիւն մը փորձուի, ողբալի ձախողուածք մը պիտի ըլլայ եւ բարի հետեւանք մը պիտի չունենայ : Այն խոհուն մարդիկը՝ որոնք արդարութեան կը հաւատան՝ թող ետ կենան յեղափոխութիւն քարողելէ՛ եւ ձեռնադահ մնան ամէն խժոժութիւններէ : Եհովա Աստուծոյ հաւատացող եւ ծառայող ոչ մէկ մարդ խժոժութեանց պիտի դիմէ : Ասիկա Եհովայի պատերազմն է-- Բ . Մնաց . Ի . 15, Բ . Կորնթ . Ժ . 4 :

Արդեօք անխիղճ եւ բռնակալ վաճառահանական իշխանութիւնը պիտի շարունակէ՞ շահամոլ ու լիբր կերպով տիրել անկաշկանդ : Ժողովուրդը ի՞նչ պիտի ընէ այդ վիճակէն ազատելու համար : Ես մեծապէս կը խնդրեմ իմ ունկնդիրներէս՝ որպէս զի հանդարտ կենան եւ հասկնան թէ Եհովա Աստուած ի՞նչ կարգադրութիւն ըրած է օգնութեան ու ազատութեան համար : Մեծ Եհովան ներկայիս Ս . Գրոց խօսքերով կը խօսի՝ տեսանելի իշխանութեան դահին ետեւ իշխող հարուստներուն ու հարստահարիչներուն եւ կ'ըսէ անոնց, ինչպէս որ արձանագրուած է Յակորու Ե . 1 եւ 2-րդ համարներուն մէջ . «Աղէ հիմա հարուստներ, լացէք ու ողբացէք այն թըշաւուրթիւններուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի



դան: Ձեր հարստութիւնը ապահանած է, ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած»: Սուրբ Գրոց այս խօսքերը որքա՛ն ընտիր կերպով կը պատշաճին մեր ներկայ ժամանակուան: Միլիոններով տալէր ունենալով հանդերձ՝ հարուստները դարձեալ վախի ու մտատանջութեան մէջ են եւ կու լան ու կ'ողբան այն թշուառութիւններուն համար որոնք այժմ իրենց վրայ եկած են: Անոնք դրամ ունին, բայց չեն դիտեր թէ ի՛նչ ընեն այդ դրամով: Եհովան շարունակելով անոնց նկատմամբ Իր խօսքերը կ'ըսէ, Յակորու Ե. 3-ին մէջ. «Ձեր ոսկին ու արծաթը ժանդոտած են, եւ անոնց ժանդը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս. վերջին օրերուն համար դանձ դիղեցիք»: Ինչպէս որ Ս. Գրքէն ապացոյց բերի, մենք այժմ Սատանային իշխանութեան վերջին օրերուն մէջ է որ կ'ապրինք եւ թէ՛ Աստուծոյ թազաւորութիւնը մօտեցած է: Այն միլիոնաւոր մարդիկը՝ որոնք այժմ ուրիշներուն ձեռքին մէջ գտնուած հարստութիւնը արտադրեցին անցելոյն, եւ հիմակ ալ անդործ ու անկուտի են, օգնութիւն կ'աղաղակեն: Անոնք Աստուծոյ չէ՛ որ կ'աղաղակեն, ինչու որ Սատանային գործակալները դանոնք կուրութեան մէջ պահած են Աստուծոյ նպատակներուն մասին: Անոնք կ'աղաղակեն անոր համար որ իրենք կողոստուած ու խարուած՝ եւ իրենց բեռներն այլեւս անտանելի դարձած են: Սակայն, Եհովան կը լսէ անոնց աղաղակները, ճիշդ ինչպէս որ Ան Եգիպտոսի մէջ ճնշուածներուն աղաղակները լսեց, եւ հարստահարիչներուն նկատմամբ Իր խօսքը դարձեալ շարունակելով Նա կ'ըսէ. «Ահա ձեր արտերը հնձող բանուորներուն (եւ ձեր պատերազմները պատերազմողներուն) վարձքը զոր ետ պահեցիք՝ կ'աղաղակէ, ու հնձողներուն բողոքը զօրութեանց Տիրոջը ականջներուն հասաւ: Երկրի վրայ փափկութեամբ ու հեշտութեամբ ապրեցաք, սիրաբերնիդ սնուցիք՝ որպէս թէ մորթուելու օրուան համար»-- Յակորու Ե. 4, 5:

Թէ՛ Եհովայ Աստուծոյ եւ թէ՛ Սատանային տեսանելի ու անտեսանելի ուժերը ներկայիս Արմազե-

դոնի մէջ կը համախմբուին : Սատանային դիխաւոր մարաջախտը «Գոռ» (Եղեկ . 1.Ը . 2) կոչուած է , եւ նա՛ է որ կը հրամայէ դեւերու անտեսանելի բանակին , ինչպէս նաեւ երկրիս վրայ եւ Սատանային իշխանութեան տակ եղած տեսանելի հզօր կաղմակերպութեան : Եհովայի դիխաւոր մարաջախտը Քրիստոս Եիսուս է , որ թշնամիին դէմ մղուած կռիւին կ'առաջնորդէ ու պիտի առաջնորդէ : Ան Իրեն օգնական ունի՝ մարդոց անտեսանելի հողեղէն փառաւոր արարածներու լէզէոններ . խոյ երկրիս վրայ նա ունի՝ մարդկային խիստ սակաւաթիւ խումբ՝ , զոր նա կը դործածէ ո՛չ թէ մարմնեղէն ղէնքերով կրուելու նպատակաւ , հասցա վկայութիւն տալու եւ ժողովուրդին գիտցնելու դալիք բաները՝ եւ անոնց մասնանիշ ընելու Եհովա Աստուծոյ թաղաւորութիւնը որ գիրննք պիտի ազատէ : Մեծ ընդհարումին օրը արագօրէն կը մօտենայ , եւ Եհովա Աստուած կ'ըսէ թշնամի ուժերուն , ինչպէս որ Եղեկիէլի մարդարէութեան մէջ դրուած է . «Ես ձեզի ու ձեր ամբողջ կաղմակերպութեան դէմ եմ եւ բնաջինջ պիտի ընեմ զձեզ» (Եղեկ . 1.Ը . եւ 1.Թ . դլուխները--տես նաեւ անգլ . Վիմտիքէյշըն անուն դրքին Բ . հատորը) : Եհովայի անունը պիտի ջատաղովուի եւ բովանդակ արարածները պիտի գիանան թէ նա՛ է դերագոյն Աստուածը : Հետեւաբար Սատանան ու անոր ամբողջ կաղմակերպութիւնը , ներկայի բոլոր աղգերն ու կառավարութիւնները , ինչպէս նաեւ Ամերիկայի կառավարութիւնը , պարտին իյնալ :

Ճնշուած ժողովուրդները կարող չեն ինքզինքնի՞ն ազատելու եւ անդադար կ'աղաղակեն : Ժողովուրդին մէջէն ոմանք առաջնորդի դերը ստանձնած են , եւ ասոնք ազատութեան համար զանազան միջոցներ , ինչպէս համայնավարութիւն (քրմիւնիզմ) , յեղափոխութիւն եւ ուրիշ բռնաճնշումներ կը քարոզեն : Ժողովուրդին տուները իրենց ձեռքէն խլուած առնուած են : Անոնք իրենց վաստակներէն կողոպտուած են : Անոնք դործ չունին , իրենց զաւակներուն սովամահութեանը ահանատես կ'ըլլան եւ յուսահատութեննուն կը կատարին : Եհովա Աստուած Իր

մարդարէին միջոցաւ ներկայիս ասոնց կը խօսի ու կ'ըսէ որ հանդարտ կենան ու իր ընկերքը տեսնեն: Սոփոնեայ Գ. Տ-ին մէջ Նա կ'ըսէ. «Ինձի սպասեցէք, . . . , մինչեւ այն օրը որ որ սրտի համար ոտք ելլեմ, քանզի իմ վճիռս աղգերը ժողովել, թաղաւորութիւնները դումարել է, որպէս զի անոնց վրայ իմ սրտմտութիւնս, իմ բոլոր սաստիկ բարկութիւննրս, թափեմ. քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս կրակովը սխալի սպառի»: Եհովան պատերազմի Աստուածն է, եւ Անոր անուան Չատազովութեան ժամանակը հասած ըլլալով, Ան Արմազեղոսի պատերազմը պիտի պատերազմի իր անուան Չատազովութեանը համար. եւ ատոր իբր արդիւնք՝ բնակիւլ ուժերը՝ չատարեւապէս պիտի ոչնչացունին եւ ժողովուրդը պիտի ազատի: Երկսայրի դժուարութիւններէն խուսափելու համար ուրիշ ճամբայ փնտռելու ոեւէ հարկ չկայ, ինչու որ անկէ դատ ուրիշ մը դոյութիւն չունի: ԶԱստուած սիրողները ուրիշ աստուած մըն ալ դոնելու պիտի չցանկան, ինչու որ անոնք դիտեն թէ Եհովայի ամէն ըրածները ուղիղ եւ արդարութեան օգտին համար են:

ԶԱստուած սիրողներուն ու զԱնիկա եւ Անոր արդար ճամբան ճանչնալու փափաքողներուն տեղեկութեանը համար՝ Անիկա Ս. Գրոց միջոցաւ պատկերացումներ ըրած է ներկայիս մօտեցող ահեղ եւ վերջնական պատերազմին մասին՝ որուն տեսողութեան սխալի իյնան երկրիս աղգերը: ԶԳ. Սաղմոսը կը նկարագրէ թշնամի Սատանային ներքեւ դոնըւած կաղմակերպութիւնը՝ որուն մարաջատն է՝ Գոգը: Ուստի Սաղմոսերդուն՝ իբրեւ Եհովայի հաւատարիմ ներկայացուցիչը՝ կ'ըսէ. «Վասն զի ահա քու թշնամիներդ կը գոռան, ու քեզ ատողները դլուխ կը վերցնեն. խորամանկութեան հնարք կը դոնեն քու ժողովուրդիդ դէմ, ու խորհուրդ կ'ընեն քու պահպանածներուդ դէմ: . . . Վասն զի միաբան սրտով խորհուրդ ըրին, ու քեզի դէմ դաշնակցութիւն ըրին. . . : Ըրէ անոնց ինչպէս Մադիամի, ինչպէս Սիսարայի» (Սաղմ. ԶԳ. 2, 3, 5, 9): Հոս Սատանային կաղմակերպութեան Մադիամ եւ Սիսարա

անունները տրուած են . եւ Դատաւորաց Ե . 20-ը սա արտայայտութիւնը կ'ընէ այն պատերազմին մասին՝ ուր Միսսորա ոչնչացուեցաւ . «Ներկինքէն պատերազմ բրին . աստղերը իրենց շրջաններէն Միսսորայի դէմ պատերազմ բրին» : «Աստղերը» կը պատկերացնեն Եհովա Աստուծոյ անտեսանելի բանակը , որ Արմադեդոնի պատերազմին ժամանակ ոչնչացումի գործը պիտի կատարէ , եւ որուն ունէ մնաս չին կրնար հասցնել Մեծ Վաճառականութիւնը եւ երկրիս ամբողջ դինուորական ուժերը : Քրիստոս Յիսուս՝ Մատթէոսի ԻԴ . դլուխին մէջ այդ պատերազմը կը նկարագրէ որպէս այն ամենամեծ նեղութիւնը , որ երբեք եկած ըլլայ աշխարհի վրայ եւ որ վերջինը պիտի ըլլայ : Այդ պատերազմը շատ մօտեցած է :

Ազգերը Աստուծոյ առջեւ այն համեմատութեամբ պատասխանատու են՝ ինչ համեմատութեամբ որ իրենց լոյս ու նպատաւոր պատահութիւն կը շնորհուի արդարութիւն սորվելու եւ դայն ի գործ դնելու : Ամերիկան ու Մեծն Բրիտանիան՝ «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած պետութեանց գլխաւոր ազգերը կը կազմեն : Այս ազգերը Եհովայի ամենամեծ լոյսն ու շնորհը ստացած են , հետեւաբար ասոնք աշխարհիս ուրիշ ունէ ազգէ աւելի մեծ պատասխանատուութեան տակ կը դանուին : Այս ազգերուն մէջ աւելի մեծ չափով կեղծաւորութիւն ի գործ դրուած եւ անիրաւօրէն աւելի մեծ չափով արին թափուած է , քան արեւուն տակ դանուած ուրիշ ունէ ազգի մէջ : Եհովան ինչո՞ւ պիտի կործանէ այս ազգերն ու կառավարութիւնները :

Ս . Քիրքը կը պատասխանէ այդ հարցման . Երուսաղէմը «Քրիստոնեայ Աշխարհ»-ի մէկ նախապատկերն էր : Երուսաղէմի մէջ էր որ Յիսուս , Եհովա Աստուծոյ Որդին , նենգաւորաբար սպաննուեցաւ եւ Անոր աշակերտները հալածուելով մեռցրուեցան : Երուսաղէմը ամբողջովին կործանուեցաւ : Համաշխարհային Պատերազմին տեւողութեան՝ եօթներորդ աշխարհակալ պետութիւնն էր որ Քրիստոս Յիսուսի հաւատարիմ հետեւորդներուն դէմ մղուած :



Հալածանքին առաջնորդեց: Ամերիկայի մէջ է որ Եհովայի Վհաները ներկայիս անխղճօրէն կը հալածուին, ինչու որ անոնք հաստատ կերպով մտադրած են՝ ժողովուրդին տեղեկութիւն տալ Աստուծոյ թագաւորութեան մասին, որ տառապող մարդկութեան միակ յոյսն է: Եհովայի Վհաներուն այս հալածանքը ղեկավարողները կղերներն են. մարդոց այն դասակարգը՝ որոնք Յիսուսը հալածելով մեղցուցին: Եթէ Յիսուս Ուաշինկթըն երթար եւ իրենց բանակատեղիին մէջ տառապող վէրերաններուն հետ խառնուէր, կղերները զԱնիկա պիտի դատապարտէին իրրեւ ստորին դասակարգի պատկանող մարդ մը: Կղերական այս միեւնոյն դասակարգը եւ քաղաքադէտ զաւթարաններն էին որ որոշում մը անցուցին Ուաշինկթըն Հէրալտ-ի 1932, Յունիս 10 թւով հրատարակուած, որով կը յայտարարուէր թէ Քրիստոս Յիսուս ստորին դասակարգի պատկանող մէկն էր:

Ս. Գիրքը «բնակիչներ» բառը կը դործածէ անարկելով այն իշխաններուն՝ որոնք երկրիս վրայ տիրած են իրրեւ Սատանային ներկայացուցիչները: Եսայիայ ԻԴ. 5, 6-ին մէջ Եհովա կ'ըսէ. «Ու երկիր իր բնակիչներուն (իշխողներուն) տակ պղծուեցաւ, քանզի անոնք օրէնքները զանց ըրին, պատուիրանքը փոխեցին, յաւիտենական ուխտը խափանեցին: Այս պատճառաւ նզովքը կերաւ երկիրը, ու անոր մէջ բնակողները իրենց յանցանքին պատիժը կրեցին. այս պատճառաւ երկրի բնակիչները (իշխողները) այրեցան, ու զիչ մարդիկ մնացին»: Ասիկա կը նշանակէ թէ Եհովայի ձեռքը վերջ պիտի դնէ երկրիս ներկայ անարդար իշխանութեան. եւ ամենամեծ՝ նեղութիւնը պիտի դայ «Քրիստոսեայ Աշխարհ»-ի վրայ, որուն մաս կը կազմէ Ամերիկան:

Այս բանախօսութիւնը հեռարձակելուս նպատակը այն չէ որ ժողովուրդը վրդովեցնեմ, հաղապարտեմ անոնց թէ՛ Եհովային ըրած կարգադրութեանը շնորհիւ կատարեալ ազատութեան յոյս կայ: Եթէ կը հաւատանք թէ Ս. Գիրքը Աստուծոյ Պօքըն է՝ ուրեմն ուսումնասիրենք զայն ներկայիս տեղի

ունեցող դէպքերուն լոյսովը : Իշխող տարրերուն ազդարարելու համար չէ որ կը հետարձակեմ այս բանախօսութիւնը : Անոնք արդէն իսկ ազդարարուած են մօտեցող աշխարհածաւալ փոթորիկին մասին, սակայն փոխանակ ուշադրութիւն ընծայելու այդ ազդարարութեան՝ անոնք յառաջ կը տանին իրենց վիժելի ծրարքները : Եհովան Սաղմոսաց ԶԲ. 5-ին մէջ անոնց մասին կ'ըսէ . «Ձեռն իմանար ու միտք չեն առներ, խաւարի մէջ կը պտըտին . երկրի բոլոր սիւնները շարժեցան» :

Ի այց ինչո՞ւ համար կը յայտարարեմ թէ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի, որուն մաս կը կազմէ Ամերիկայի կառավարութիւնը, իյնալէն վերջն է որ կատարեալ ազատութիւնը պիտի դայ : Իմ պատասխանս այն է թէ Եհովա Աստուած՝ այդպէս կ'ըսէ : Սովոնեայ Գ. 8-ին մէջ Նա կը յայտարարէ թէ Իր նպատակն է ոչնչացնել Սատանային կազմակերպութիւնը, եւ ապա Գ-րդ համարին մէջ Նա կ'ըսէ . «Վասն զի այն ժամանակ (կործանումէն վերջ) ժողովուրդներուն մաքուր լեզու մը (խրատի ու յորդորանքի) պիտի դարձնեմ, որպէս զի ամէնը Տիրոջը անունը կանչեն, ու մէկ սրտով անոր ծառայութիւն ընեն» (տես անգլ. Ս. Գիրքը) : Այն ատեն ամէն ոք պիտի դիտնայ թէ Եհովան է զերազոյն Աստուածը :

Դարերով՝ Սատանան երկրիս ազդերուն անտեսանելի իշխանը եղած է, եւ նա Աստուծոյ ու մարդոց ամենամեծ թշնամին է : Սատանան ճշմարտութեան հանդէպ կուրացուցած է ժողովուրդներն ու իշխողները : Աստուած ցարդ արդեւք չէ հանդիսացած անոր ամբարշտութեանց, բայց ժամանակը ա'լ հասած ըլլալով՝ Եհովա պիտի արգիլէ Սատանան եւ զանիկա ու անոր կազմակերպութիւնը պիտի ոչնչացնէ ու Իր անունը պիտի ջատագովէ : Այնուհետեւ աշխարհի վրայ պիտի տիրէ՝ Իր Քրիստոս Յիսուս արդար Որդին : Այդ կառավարութիւնը Անոր ուսերուն վրայ պիտի ըլլայ եւ մշտնջենական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի տիրէ (Եսայեայ Թ. 6, 7) : Այդ ժամանակամիջոցին մար-



դիկ ճշմարտութեան պիտի տեղեկանան, եւ ինչպէս Ս. Գիրքը կը յայտարարէ, անոնք պիտի ըսեն. «Եկէ՛ք ու երթանք ու Տիրոջ կառավարութեան հպատակինք, եւ ան մեղի շխաղ ճամբան պիտի սորվեցնէք». եւ այն ատեն անոնք պատերազմելէ ու կռուելէ պիտի դադրին եւ յաւիտեան խաղաղութեամբ պիտի ապրին-- Եսայ. Բ. 2--4:

Եհովան ստեղծեց մեր երկրազուեցողը, որպէս զի մարդիկ անոր վրայ ապրին խաղաղութեամբ, առատութեամբ, առողջութեամբ ու երջանկութեամբ. եւ Նա կը յայտարարէ թէ Քրիստոսի տիրապետութեան տակ երկիրը իր առատ հունձքը պիտի տայ, ու ինք պիտի օրհնէ ժողովուրդը եւ երկրիս վրայ ամէն մարդ զինքը պիտի ճանչնայ (Սաղմ. Կէ. 7): Նոր աշխարհի անտեսանելի Իշխանը Քրիստոս է. սակայն Նա երկրիս վրայ պիտի ունենայ ուղղամիտ եւ հաւատարիմ մարդիկ՝ որոնք անկեղծութեամբ եւ հաւատարմութեամբ իր հրամանները իզոյժ պիտի դնեն: Այդ մարդիկը արդէն իսկ հաւատարմօրէն ցոյց տուած են առ Աստուած ունեցած իրենց նըւիրումը: Ատոնց մէկ մասը յիշուած է Երբայեցւոց ԺԱ. գլուխին մէջ. եւ Տէրը ԽՅ. Սաղմոսին մէջ կը յայտարարէ թէ անոնք ամբողջ երկրիս վրայ իշխաններ պիտի ըլլան: Եսայեայ ԼԲ. 1-ին մէջ զըրւած է. «Ահա թաղաւոր մը արդարութեամբ պիտի թաղաւորէ, ու իշխանները իրաւունքով պիտի իշխեն»: Ներկայիս երկրիս վրայ դանուող Եհովայի Վկաներուն պարտականութիւնն ու առանձնաշնորհն է այս ճշմարտութիւնը ժողովուրդին ուշադրութեան հրաւիրել: Անոնք անձնական շահ կամ մարդոց հաճութիւնը փնտոող կամ ակնկալող չեն: Անոնք ուրախութեամբ Եհովա Աստուծոյ պատուէրներուն կը հնազանդին:

Այն հարցման թէ՛ «Ամերիկայի կառավարութիւնը կրնա՞յ կանգուն մնալ», Եհովայի Խօսքին վրայ հիմնելով իմ պատասխանս, բացարձակօրէն կ'ըսեմ. Ո՛չ: Ամերիկայի նման այս առատութեան երկրին մէջ ներկայիս տիրող սոսկալի տառապանքը, տաղնապն ու անարդարութիւնը՝ բաւական զօրաւոր

պատճառներ ըլլալու են լրջամիտ մարդիկը մղելու՝ որ նկատի առնեն ատոնց պատճառն ու դարմանը, եւ այդ ամբողջ տեղեկութիւնը որոշապէս տրուած է Ս. Գրքին մէջ: Այս մտաւայուտ մեծագոյն նեղութիւնէն խուսափողներն ու աղատուոյները անոնք պիտի ըլլան՝ որոնք Աստուծոյ Խօսքին ուշադրութիւն պիտի բնծայեն ու Նհովայի կողմը պիտի կանդնին, ինչու որ Նա ահա այդպէս կը յայտարարէ Ստիտնեայ Բ. 2, 3-ին մէջ:

Նհովայի Վկաները ձեր բարեկամներն են, ինչու որ անոնք ձեզի կը բերեն այն լիակատար տեղեկութիւնը թէ՛ ինչպէ՛ս կրնաք բացարձակ աղատութիւն ստանալ: Մենք ակնկալելու ենք որ Սատանան ու անոր գործակալութիւնները ամէն ջանք պիտի թափեն որ այս տեղեկութիւնը ձեզի չհասնի. եւ անոնք ճիշդ այդ բանն է որ կ'ընեն ներկայիս: Որպէս զի կենաց, խղարկութեան ու երջանկութեան տանող ճամբան սորվիք՝ բուն ձեր օգտին համար՝ կը թելադրեմ ձեզի՝ որ ներկայ ահաւոր ու ճգնաժամային շրջանին մէջ Ածյ. Խօսքը ուսումնասիրէք: Ժողովուրդներուն աղատութեանը համար մարդոց կամ երկրային սեւէ կազմակերպութիւններու կողմէն թափուած բոլոր ջանքերը դատապարտուած են ջուրը խնայու, եւ մեծ նեղութիւնը անխուսափելիօրէն վրայ պիտի հասնի, ինչու որ ահա այդպէս վճռած է Նհովա Աստուած: Երբ Սատանային ամբարիշտ, անխիղճ եւ բռնակալ կազմակերպութիւնը գոյութենէ դադրի, երբ Քրիստոսի, Թաղաղութեան Իշխանին, ներքեւ եղած աշխարհի արդարադատ կառավարութիւնը եւ ասկէ բղխող օրհնութիւնները ասանէք ու փորձառութեամբ զգաք, այն ասան դուք պիտի մտնաք ձեր ներկայ նեղութիւնները, եւ պիտի ուրախանաք ու պիտի դովէք զԱնիկա՝ որ ամէն բարի եւ կատարեալ պարգեւներ Տուողն է:

Ամերիկայի կառավարութիւնը կշիռքով կշռուած ու սպիաս դառնուած է: Ան կանգուն չկրնար մնալ: Ան շատ չանցած պիտի իյնայ՝ ներկայիս գոյութիւն ունեցող ուրիշ ազգերու կամ կառավարութիւններու հետ միասին: Այդ անկումը տեղի պի-

տի ունենայ՝ հակառակ այն ամէն ջանքերուն՝ զորս Մեծ Վաճառականները, դիւանադէտներն ու կղերները, զինուորականութիւնն ու զզօրաւոր-բազուկ դունդը-ը, եւ Սատանան ու անոր ամբողջ կազմակերպութիւնը ի դործ պիտի դնեն՝ իրենց բռնակալ իշխանութիւնը կանգուն պահելու համար: Ան պարտի՛ իյնալ ու պիտի՛ իյնայ, ինչու որ Յհովա Աստուծոյ թաղաւորութիւնը այլեւս եկած հասած է: Եթէ Ամերիկայի կառավարութիւնը, որ երկրիս վրայ գտնուող միւս կառավարութեանց սեղանաւորը (պէն-էրը) կամ տոկոսով դրամ փոխ տուողն է, չկրնար կանգուն մնալ, ալ ի՞նչ յոյս կրնան ունենալ աշխարհիս դրամ փոխ առնող կամ պարտքի տակ եղող միւս կառավարութիւնները: Մի միայն Աստուծոյ արդարադատ կառավարութիւնն է որ կրնայ կանգուն մնալ եւ պիտի մնայ: Ուստի, ներկայիս փութացէ՛ք Յհովայի բանակին միանալ եւ իրական ու տեւական պաշտպանութիւն դոնել:

Յհովայի արդարադատ թաղաւորութեան ներքեւ՝ դուք ձեր աշխատութեան ստուղը պիտի վայելէք: Ձեր կիներն ու երեխաները պատսպարան եւ ուտելիք պիտի ունենան, եւ դուք յաւիտեան այս երկրիս վրայ պիտի ապրիք խաղաղութեամբ, երջանկութեամբ ու առողջութեամբ (Միք. Դ. 2-4): Ուստի կը յորդորեմ դձեղ որ անվրդով մնաք, բռնութիւն բանեցնելէ հրաժարիք, Յհովա Աստուծոյ ապաւինիք, եւ սպասէք այն փրկութեան ու խաղաղութեան եւ անվերջ ուրախութեան, զորս Անոր թաղաւորութիւնը պիտի բերէ ներկայիս տառասող այն միլիոնաւոր մարդոց, որոնք Իրեն կը հնազանդին: Ձեր միակ յոյսը Աստուծոյ թաղաւորութիւնն է: Ձեր ամենամեծ Բարեկամը ԵՀՈՎԱ ԱՍՏՈՒԱԾՆ է:

**Ա**ՅՍ բանաստեղծականն նպատակն է ժողովուրդին խօսիլ այն խիստ կենսականօրէն կարեւոր ճշմարտութեան մասին՝ զոր իրենք իրաւունք ունին լսելու : Նպատակն է հակաճառութիւն ստեղծել . սակայն՝ եթէ ճշմարտութեան հակառակողներուն հետ հակաճառութիւն ունենալով է միայն որ կարելի է ճշմարտութեան մասին խօսիլ՝ այն պարագային այդ հակաճառութեան պատասխանատուութիւնը հակառակողներուն կամ մոլորեալներուն ուսերուն վրայ կը ծանրանայ : Ի վերջոյ՝ այդ հակառակողները Ամենակալ Աստուծոյ ատեանին առջեւ հաշիւ պիտի տան՝ Անոր թագաւորութեան պատգամին յայտարարութեանը հակառակելուն համար : Անոնք մարդոց դէմ է՛ որ կը կոռլին պարզապէս՝ հասցա Յաւիտենական թագաւորին դէմ :

Վերջերս, Նիւ Ճըրզի նահանգին՝ Պրիկընֆիլտ, էդպրբի Փարք եւ Օչըն Կրօլ քաղաքներուն, նաև Փէնսիլվանիա եւ Քլենէթիքթ նահանգներուն մէջ եւ անոնցմէ զուրս ուրիշ զանազան տեղեր, խրդճամիտ այրեր ու կիներ ոստիկաններու կողմէ անգրթօրէն ձերբակալուած, նղովանաց ենթարկուած ու խոշտանդուած եւ այլապէս անիրաւութիւն կրած ու զնգաններու մէջ նետուած են՝ երբ անոնք կը ջանային բարիք ընել եւ տագնապի մատնուած ժողովուրդին մխիթարութիւն ընծայել : Հաղարաւոր ուրիշ աղնիւ մարդիկ՝ կառավարական պաշտօնեաներուն կողմէ ի զործ դրուած այդ անիրաւութիւններէն ցնցուած ու ապշահար՝ հարցուցած են թէ ինչո՛ւ համար է որ այդ անվնաս այրերն ու կիները այդպէս կը հալածուին : Ինծմէ խնդրուած է այդ հարցման պատասխանը հեռարձակել՝ եւ ես շնորհակալ եմ այդպիսի պատեհութիւն մը ինծի տրուելուն համար :

Ձերբակալուած եւ հալածուած այդ այրերն ու կիները Նհովայի Վկաներն են՝ որոնք կը ջանան



իրենց օրինաւոր եւ արդար պարտաւորութիւններն ի գործ դնել: Ո՞վ է ՅՀովան: Անիկա տիեզերքի հզօր Աստուածն է, երկնի ու երկրի Արարիչը եւ ամէն բարեաց Պարզելիչը, զոր ամէն անձ պարտի ճանչնալ եւ Անոր հնազանդիլ՝ ասլլիլ կարենալու համար:

1900 տարի առաջ՝ Բեթլեհէմի մէջ մանուկ Յիսուսի ծնած ժամանակ՝ երկինքէն դրկուած ՅՀովայի հրեշտակը սա պատգամը յայտարարեց. 'Ահա՛ ես ձեզի մեծ ուրախութեան բարի լուր կը բերեմ որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ. ծնած է ան որ աշխարհի Թաղաւորը պիտի ըլլայ, եւ Նա երկրի վրայ խաղաղութիւն պիտի բերէ ու մարդոց միջեւ ալ հաճութիւն' (Ղուկ. Բ. 9-11): Այդ ժամանակէն իվեր՝ զԱստուած ու Անոր արդարադատ կառավարութիւնը սիրողները Անոր Թաղաւորութեան օրուանը սպասած եւ ուրախութեամբ անոր դալը պատմած են ուրիշներուն:

Թաղաւորութեան ժամանակը ա՛լ հասած է: Այդ իրողութիւնը ինչէ՞ն կրնանք հասկնալ: Սուրբ Գիրքը Մատթէոսի ԻԳ. եւ Ղուկասու ԻԱ. գլուխներով մեզի կ'ընծայէ Տիրոջ խօսքերը՝ ուր Նա ըսած էր թէ Իր ու Թաղաւորութեան դալուստը տեղի պիտի ունենար այնպիսի ատեն մը՝ երբ երկրիս վրայ մեծ տաղնապ ու ասլուութիւն պիտի տիրէր, երբ մարդոց սիրտերը վախէ պիտի նուաղէին դալիք բաները տեսնելով, եւ երբ ամբարշտութիւնը յառաջ պիտի ընթանար սանձարձակ: Ամէնն ալ դիտեն թէ ներկայիս ահա ճիշդ այդ կացութիւնն է որ կը տիրէ բովանդակ երկրիս վրայ: Այդ միեւնոյն ժամանակուան մասին Տէրը Իր վկաներուն պատուէր տուաւ՝ ըսելով անոնց. 'Թաղաւորութեան այս աւետարանը պէտք է այլեւս ժողովուրդին քարոզել կամ յայտարարել՝ իրրեւ վկայութիւն մը անոնց': ՉԱստուած սիրողներն ու Անոր պատուէրներուն հնազանդողները ընտրութեան ուրիշ ճամբայ չունին: Անոնց կեանքը կախում ունի հաւատարմօրէն Աստուծոյ կամքը կատարելէն: Անոնք պարտին ժողովուրդին պատմել Թաղաւորու-

թեան ուրախ լուրը, եւ անոնք այդ բանը պարտին ընել ու պիտի ընեն իբրեւ Նհովայի վկաները, իրենց կեանքի գնովն իսկ :

### ԻՆՉՊԻՍ

Նհովայի վկաները աւետարանը ինչպէ՞ս քարոզելու են : Այս վերջին օրերուն մէջ Աստուած-բէախօն յառաջ բերած է, եւ ատոր շնորհիւ շատեր կարող են իրենց տուները մնալու եւ թաղաւորութեան պատգամին այս կամ այն մասին հետարձակումը լսելու : Մարդիկ մեծ փափաք ունին աւելի բան սորվելու եւ ուսումնասիրութիւններ կատարելու : Ժողովուրդին օգնելու նպատակաւ որ անոնք աւելի լաւ ըմբռնեն արդարադատ կառավարութիւն մը հաստատելու եւ մարդկութիւնը օրհնելու համար Նհովայի ունեցած նպատակը, աւետարանը կամ ուրախ լուրը դրքի ձեւով հրատարակուած է, ու Նհովայի վկաները առ Աստուած ունեցած իրենց սէրէն եւ ժողովուրդին օգնելու փափաքէն մղուած՝ Անոր պատուէրին հնազանդելով այժմ դռնէ դուռ կը շրջին եւ այս պատգամը պարունակող գրականութիւններ ցոյց կու տան ժողովուրդին եւ այդպէս անոնց պատեհութիւն կ'ընծայեն Ս . Գիրքը ուսումնասիրելու եւ հասկնալու : Ահա այդպէս էր որ մեր Տէրն ու առաքեալները դռնէ դուռ շրջեցան ժողովուրդին սորվեցնելով :

Նհովայի այդ վկաները ժողովուրդէն դրամական սղախիկ դումար մը կ'օտանան իբրեւ նուիրատուութիւն՝ սրպէս զի կարենան վերոյիշեալներուն նման ուրիշ զիրքեր ալ հրատարակել : Միթէ այդ այրերն ու կիները գրածախութեամբն դործով դրադուած են դրամ չահելու նպատակաւ : Բացարձակապէս ո՛չ : Անոնք իրենց ապրուստը ճարելու համար դործարաններու կամ դաշտերու մէջ կ'աշխատին : Անոնք խնայողաբար կ'ապրին եւ ապա որքան որ կրնան իրենց ամբողջ դրամն ու ժամանակը Աստուծոյ թաղաւորութեան աւետարանը քարոզելու համար կը դործածեն : Նուէր ստացուած դրամը՝ դրճերուն հրատարակութեան ու շրջաբերութեան

ծախսէն շատ աւելի պակաս է: Այս պակասը կը դոցուի կամաւոր նուիրատուութիւններովը այնպիսի այրերու եւ կիներու՝ որոնք մեծապէս կը փափաքին կարելի ամէն կերպով ժողովուրդը լուսաւորելու Աստուծոյ թաղաւորութեան նկատմամբ: Այն ամբաստանութիւնը բրած են թէ ես շահ կ'ընեմ այդ դրքերու «վաճառում»-էն, ամբաստանութիւն մը որ բացարձակապէս անիրաւ է: Այդ դիրքերը իմ կողմէս դրուած ըլլալուն համար հեղինակութեան իրաւունքը իմ անունոյս ատնուած եւ տպա անմիջապէս փոխանցուած է հրատարակիչ ընկերութեան՝ առանց հեղինակութեան մէկ սէնթ շահարժին ստանալու, այն նկատումով որ պատգամը ժողովուրդին ընծայուի կարելի եղածին չափ դիւրամատչելի նուէրով մը, իսկ չքաւորներն ալ դայն ստանան բոլորովին ձրի:

Յհովայի Վկաները այս աշխարհի դրամով հարուստ չեն, հետեւաբար չեն կրնար այնքան բազմաթիւ դիրքեր արտադրել ու բոլորովին ձրիօրէն տարածել ժողովուրդին մէջ: Ուստի ամէն անոնց որ կարող են ու կը փափաքին՝ պատահութիւն կ'ընծայուի իրենց դրամին մէկ մասը յատկացնելու՝ Աստուծոյ թաղաւորութեան ուրախ լուրերը իրենց նմաններուն ծանօթացնելու գործին համար: Ամէն անհատ որ այս ուրախ լուրերը կը լսէ եւ անկեղծօրէն կը փափաքի երկրիս ժողովուրդներուն համար արգարադատ կառավարութիւն մը հաստատուած տեսնել՝ այդ ուրախ լուրերը ուրիշներուն հոչակելու գործին մէջ կ'ուղէ բաժին մ'ունենալ: Ասիկա մէկն է այն պատճառներէն՝ որ այս դրքերէն աւելի քան 130 միլիոն օրինակներ ժողովուրդին մէջ շրջաբերութեան դրուած են անցեալ տասը տարուան շրջանին, եւ այդ ժողովուրդէն շատեր մեծապէս մխիթարուած ու քաջալերուած են այս ուրախ լուրերով: Երկրիս վրայ երբեք չէ եղած գործ մը որ ասոր չափ մխիթարութիւն ընծայած ըլլայ ժողովուրդին, ինչու որ ատիկա Յհովայ Աստուծոյ թաղաւորութեան մասին ժողովուրդին ճշմարտութիւնը ներկայացնելու գործն է, եւ աշ-

խարհի միլիոնաւոր տառապողներուն համար ազատութեան միակ յոյսն է այդ Թաղաւորութիւնը: Ասիկա կազմակերպութեան մը անդամներ շահելու համար յառաջ տարուած բրտրականտա մը չէ, հասցա ժողովուրդին ընդհանուր բարեկաւութեանը համար կատարուած դաստիարակչական դործ մըն է:

### ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

Աստուծոյ Թաղաւորութիւնը մարդոց համար ինչո՞ւ այսքան կարեւոր է: Համառօտաբար կը պատասխանեմ թէ Աստուած երկար ատեն առաջ մարդը կատարեալ ստեղծեց: Աստուծոյ թշնամին մարդը յանցանքի մղեց, եւ այդ յանցանքը աշխարհի մէջ տառապանք ու մահ մտցուց եւ այդ օրէն իվեր ամէն մարդ տառապած է: Իարեբու շրջանին զօրաւորներէն ոմանք տիրած եւ տկարադոյնները կեղեքած են: Անարդարները իշխանութեան մականը շարժած եւ հեղերը բռնադատած են հպատակելու: Այդ անարդար իշխանութիւնը իր դադաթնակէտին հասած է, եւ ներկայիս ամէն աղղերու մէջ ալ ժողովուրդը կը տառապի: 1900 տարի առաջ՝ Աստուած մարդուն համար փրկութիւն հայթայթեց Իր սիրելի Որդւոյն՝ Յիսուսի արեամբը: Եհովա Աստուած խոստացաւ՝ Իր կանխորոշ ատենին արդարադատ կառավարութիւն մը հաստատել մարդուն համար, յայտնելով թէ այդ կառավարութեան օրով անօրինութիւնը պիտի սանձըւի, ամբարշտութիւնը մէջտեղէն պիտի վերցուի եւ թէ՛ ով որ ճշմարտութիւնը սորվի ու Աստուծոյ Թաղաւորութեան օրէնքին հնազանդի, մարմնի ու մտքի կատարեալ առողջութեան մէջ պիտի հաստատուի, բնակարան ու առատութիւն պիտի ունենայ, եւ յաւիտեան երկրիս վրայ պիտի ապրի խաղաղութեամբ ու բարգաւաճութեամբ: Այս պատճառաւ՝ Ս. Գրոց հաւատացողները Աստուծոյ Թաղաւորութեանը երկրիս վրայ հաստատուելու ժամանակին սպասած են մեծ ակնկալութեամբ: Այդ ժամանակը ա՛լ հասած է, ու ներկայիս Եհովան Իր վկաները հոս հոն կը զրկէ Իր ճշմարտութեան



պատգամովը, որպէս զի մարդիկ կարենան սորվիլ ու մխիթարուիլ եւ յոյս ունենալ: Ուրեմն սեւէ կերպով չենք կրնար չափազանցել այդ պատգամին կարեւորութիւնը:

### ՀԱԿՍՌԱԿՈՂՆԵՐ

ՁԱտուած եւ արդարութիւնը սիրող եւ Անոր տուած յուսոյ պատգամը դռնէ դուռ տարածող այս խոնարհ այրերն ու կիներն են որ կը խոչտանդուին, կը ձերբակալուին ու կը հալածուին: Անոնք այսպէս անխրաւութիւն կը կրեն անոր համար՝ որ անոնք ՅՏովայի ներկայացուցիչներն ու ծառաներն են եւ Անոր արդարադատ կառավարութեան մասին խաղաղութեան պատգամը կը բերեն: Բանսարկու Սատանան էր որ մարդը մեղքի մղեց: Սատանան հակառակ է Աստուծոյ եւ արդարութեան եւ այս աշխարհի կառավարութիւններուն անբեւոյթ իշխանը եղած է երկար ատեն: Նա յայտարարեց թէ ինք կարող էր բոլոր արարածները ՅՏովայի դէմ հանելու: Աստուած ընդունեց Սատանային մարտահրաւէրը, յայտարարելով նոյն ատեն թէ Իր նպատակն էր Իր կանխորոշ ժամանակին երկրիս վրայ արդարադատ կառավարութիւն մը հաստատել Գրիտոսի իշխանութեան տակ, եւ թէ՛ այդ կառավարութիւնը հիմնովին պիտի կործանէր Սատանային տիրապետութիւնը: Այս պատճառաւ Նա յայտարարեց թէ թշնամութիւն պիտի դնէր Իր թաղաւորութեան սերունդին ու Սատանային միջեւ: Ատիկէ իվեր կենսական հարցը եղած է՝ «Ո՞վ է դերագոյն էակը, ՅՏովա Աստուած թէ Սատանան»: ՅՏովան թոյլատրած է Սատանային՝ որ իր ամբարը շտուտեան ու վատ կառավարութեան ու ժողովուրդը ճնշելուն մէջ իր ծայր աստիճանին երթայ, ու ներկայիս վախճանը հասած է: Սատանան տեղեակ է ասոր, եւ իր բովանդակ դորութիւնը կը դործածէ ժողովուրդը ճշմարտութեան նկատմամբ կուրացնելու եւ ՅՏովա Աստուծոյ դէմ հանելու համար: ՅՏովան այժմ Իր վկաները կը դրկէ ազարարելու համար աշխարհը կառավարողներուն թէ

Իր նպատակն է մօտ ատենէն ոչնչացնել Սատանային իշխանութիւնն ու կաղմակերպութիւնը, եւ Նա կը պատուիրէ Իր վկաներուն՝ որ ժողովուրդին հաղորդեն այն ուրախ լուրը թէ շատ չանցած իրենք կատարելապէս պիտի ազատին ու օրհնուին Գրիստոսի տակ դրուած Իր արդարադատ կառավարութեան միջոցաւ: Այս պատճառաւ Բանասարկու Սատանան ու անոր բոլոր դործակալները ոչի ի բռին կը հակառակին ՅՀովա Աստուծոյ ու Անոր թաղաւորութիւնը ներկայացնողներուն, եւ Անոր վկաները կը հալածուին ու բանտ կը դրուին:

Որպէս ազացոյց այն իրողութեան թէ Բանասարկու Սատանան մաղուց իվեր աշխարհիս ազդերուն աներևոյթ իշխանը եղած է եւ է տակաւին, եւ թէ նա իր ներկրային ներկայացուցիչները մղած է հալածելու համար ՅՀովա Աստուծոյ ծառաները՝ այս առթիւ կը ներկայացնեմ հետեւեալը.

Երբ Յիսուս դեռ մանուկ մըն էր՝ Պաղեստինի այն ատենուան կառավարիչը փորձեց սպաննել զԱյն: Այդ կառավարիչը Սատանային մէկ ներկայացուցիչն էր: Եթէ նա Աստուծոյ ներկայացուցիչն ըլլար, պիտի չջանար Աստուծոյ սիրելի Որդին մեռցնելու: Այն ատեն երբ Յիսուս Իր երկրային դործունէութեան սկսաւ, ինչպէս Ս. Գիորքը կը յայտնէ, Սատանան ջանաց Յիսուսը համոզել որ Աստուծոյ օրհնքը դրժէ ու այդպէս առաջ բերէ Իր անձին ոչնչացումը: Անոր այդ ջանքը ի դերեւ ելլելով՝ ան վճուեց կարելի ամէն կերպով Յիսուսը հալածանաց ենթարկել: Մուրը եւ արդար Յիսուսը տոժարին մէջ դանուած գրեթէ ամէն ոճրագործութիւններով ամբաստանուեցաւ: Ի վերջոյ Նա կեղծ ամբաստանութեամբ եւ առանց արտօնադրի (աւարընք) ձերբակալուեցաւ, ապականած ու նախապաշարուած դատարանի մը առջեւ քաշուեցաւ, ապօրինի կերպով դատուեցաւ ու դատապարտուեցաւ վճարուած եւ սուտ վկայութեամբ, եւ ամբարշտօրէն մեռցուեցաւ:

Իր մահէն ճիշդ մի քանի օր առաջ, ինչպէս որ յայտնուած է Յովհաննու աւետարանին ՖԴ.

գլուխով, Յիսուս ըսաւ իր աշակերտներուն թէ ինք  
քիչ վերջ բռնի մահուան պիտի ենթարկուէր եւ թէ՛  
այդ ոճրադործութեան մէջ զլխաւոր դերակատա-  
րը պիտի ըլլար Սատանան՝ այս աշխարհի անտե-  
սանելի իշխանը: Նոյն ատեն Յիսուս ըսաւ իր հա-  
ւատարիմ հետեւորդներուն, ինչպէս որ արձանա-  
դրուած է Յովհ. ԺԳ. զլուխին մէջ. «Որովհետեւ  
... ես ձեզ աշխարհէ ընտրեցի, անոր համար աշ-  
խարհ ձեզ կ'ատէ: Միաքերնիդ բերէք այն խօսքը  
... թէ Մատան իր Տիրոջմէն մեծ չէ. եթէ զիս  
հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն»: Անվիճելի ի-  
րողութիւնները ցոյց կու տան թէ՛ այդ օրէն մին-  
չեւ հիմա ամէն անոնք որ իբրեւ Քրիստոս Յիսու-  
սի հետեւորդը՝ ջանացած են հաւատարմօրէն Աս-  
տուծոյ ծառայել, հալածանք կրած են իշխողներէն  
ու կեղծաւոր կրօնականներէն, որոնք Սատանային  
գործակալներն են:

Բ. Կորնթ. Դ. զլուխին մէջ ըսուած է թէ՛  
Սատանան է այս աշխարհի ազդերուն աներեւոյթ  
աստուածը կամ իշխանը, եւ թէ՛ նա ամէն ճիգ կը  
թափէ ժողովուրդը ճշմարտութեաննկատմամբ կոյր  
պահելու համար: Աշխարհի տեսանելի իշխողներն  
են, Մեծ Վաճառականները՝ որոնք ժողովուրդը կը  
կողոստեն եւ դիւանագէտները կ'ապականեն. վար-  
պետորդի դիւանագէտները՝ որոնք անպատշաճ ազ-  
դեցութեանց տեղի կու տան անձնասիրական նկա-  
տումներով. եւ մեծ քարոզիչները կամ կրօնական  
առաջնորդները: Հաւատուրաց կղերները երկրիս  
վրայ Սատանային զլխաւոր ներկայացուցիչներն  
են, ինչու որ անոնք կը յայտարարեն թէ իրենք  
Ս. Գիրքը կը քարոզեն, բայց ո՛չ անոր կը հաւա-  
տան եւ ոչ ալ կը քարոզեն դայն: Անոնք Ս. Գիրքն  
ու կրօնքը իբրեւ վարագոյր մը գործածած են՝  
որուն ետեւ Մեծ Վաճառականներն ու ապականալ  
դիւանագէտները յառաջ տարած են իրենց յոռի իշ-  
խանութիւնը: Փոխանակ ժողովուրդին Ս. Գրոց  
ճշմարտութիւնները քարոզելու՝ կղերները իրենց  
բովանդակ ազդեցութիւնը ի գործ դրած են մար-  
դիկ ատոնց նկատմամբ տգիտութեան մէջ պահել:

Ամէն ուր որ Եհովայի Վկաները ձերբակալուած ու հալածուած են՝ ատիկա տեղի ունեցած է կղերնե-  
րու դրդումով, որոնք կա՛մ իրենք ոստիկանական  
պաշտօնեաները անձամբ առաջնորդած են ձերբա-  
կալութիւն ընելու, եւ կամ, համոզած են իրենց հօ-  
տին անդամներէն մէկը որ ձերբակալութիւն ընել  
տայ: Ամերիկայի հիմնական օրէնքը այնպէս կը  
անօրինէ թէ՛ Եկեղեցիի ու կառավարութեան միջեւ  
պէտք չէ որ սեւէ դաշնակցութիւն դոյութիւն ունե-  
նայ. սակայն այդպիսի դաշնակցութիւն մը իրապէս  
դոյութիւն ունի: Էդուարի Փարք, Ն. Ճ.-ի մէջ ոս-  
տիկան մը՝ իր պաշտօնական հանդամանքով տեղե-  
կացուց Եհովայի Վկաներուն թէ՛ իրենք Ս. Գրոց  
վերաբերեալ դրքերով դռնէ դուռ չէին կրնար շը-  
ջիլ՝ եթէ քաղաքին քարոզիչներէն կամ կղերներէն  
պատշաճօրէն վաւերացուած արտօնադիր մը ձեռք  
չընէին նախ: Օչըն կրօլ, Ն. Ճ.-ն պաշտօնադրով  
մը հիմնուած է իրրեւ կրօնական ընկերակցութիւն  
մը, եւ ահա հող էր որ քաղաքին վրայ իշխող քա-  
րոզչական կամ կղերական ընկերութիւնը վերջերս  
ձերբակալել տուաւ այնպիսի անձինք, որոնք Աս-  
տուծոյ թաղաւորութեան աւետարանը կը քարո-  
զէին: Եթէ այս իբր յանցաւոր ամբաստանուածնե-  
րը միս կամ հաց ծախելով դռնէ դուռ շըջէին՝  
միթէ այդ կղերները պիտի ձերբակալել տայի՞ն  
դանոնք: Անկասկածօրէն ո՛չ: Սակայն երբ այդ  
անձինք Եհովա Աստուծոյ թաղաւորութեան պատ-  
դամովը ժողովուրդին մէջ կը շըջին՝ անոնք անմի-  
ջապէս յանցաւորներ եւ օրէնքը բռնաբարողներ կը  
դառնան կղերներու աչքին՝ որոնք կեղծաւորաբար  
կը յայտարարեն թէ Աստուծոյ Խօսքը կը քարոզեն:  
Եւ ի՞նչ է պատճառը: Պատճառը այն է թէ կղեր-  
ները չեն փափաքիր որ ժողովուրդը ճշմարտութիւնը  
դիտնայ ու հասկնայ: Ուրեմն, դուք դատեցէք, թէ  
անոնք դո՞վ կը ներկայացնեն, զԱստուած թէ Սա-  
տանան:

Փաստելու համար թէ կղերները չեն փափաքիր  
որ ժողովուրդը ճշմարտութիւնը լսէ՝ յիշենք թէ  
դեռ երէկ (Ս.պրիլ 30, 1932) երբ Եհովայի Վկանե-



բու խումբ մը՝ շղթայուած բէտիօ կայաններէ տրուելիք այս հեռարձակումը ծանուցանող յայտարարութիւններ կը ցրուէր Պըրլինֆելտ, Ն. Ճ. -ի մէջ, այդ Քրիստոնեաները ձերբակալուեցան ու բանտը նետուեցան եւ հոն պահուեցան մինչեւ որ դրամական երաշխաւորութեամբ դուրս հանուեցան: Անկասկած ատիկա կատարուեցաւ կաթոլիկ քահանաներու դրողումովը, որոնք կը խորհին որ իրենց դործնէ հրամայել թէ քաղաքը ինչպէս կառավարուելու է ու ո՛վ լսելու է ճշմարտութիւնը եւ ո՛վ լսելու չէ:

Բայց ըսողներ պիտի ըլլան թէ՛ անշուշտ քարոզիչները կամ կղերները հակառակութիւն ցոյց պիտի չտան Ս. Գրոց մէջ դառնուած ճշմարտութեան յայտարարութեանը: Սակայն իրողութիւնները ցոյց կու տան թէ ահա ատոնք են դիտաւոր հակառակողները, որոնք օրէնքի զօրաւոր բազուկը կը բռնադատեն որ արդեւիք հանդիսանայ Ս. Գրոց ճշմարտութեան տարածմանը: Միթէ կղերներուն բռնած ընթացքը դարձանք պատճառելի՞ ու է Քրիստոսի ճշմարիտ հետեւորդներուն: Ո՛չ, ընդհակառակը անոնք ակնկալելու են ատիկա, քանզի Յիսուսի առաջին դալուստէն իվեր միշտ այդպէս է եղած: Փարիսեցիներն ու քահանաները Յիսուսի երկրիս վրայ եղած ատենուան կղերներն էին: Այդ կղերները շոնդալից յայտարարութիւններ կ'ընէին թէ զԱստուած կը ներկայացնէին, ճիշդ ինչպէս որ մեր օրուան կղերները կը յայտարարեն թէ զԱստուած կը ներկայացնեն: Նոյն կղերներն էին որ հալածեցին Յիսուսը: Երբ անոնք մէկէ աւելի անգամներ ջանացին Յիսուսը մեղցնել՝ Նա այդ կղերներուն առջեւ կանգնեցաւ ու բսաւ անոնց, որոնք կը յայտարարէին թէ իրենք Արրահամի սերունդը ու Աստուծոյ ներկայացուցիչներն էին, թէ իրենք իսկապէս Սատանայի՛ն ներկայացուցիչներն էին: Այս առթիւ մէջ կը բերեմ Յովհ. Ը. 40-45-ին մէջ դառնուած Յիսուսի խօսքերը. «Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս, այնպիսի մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւնը խօսեցայ, զոր Աստուծմէ լսեցի. Արրահամ այդ

բանը չբրաւ: Դուք ձեր հօրը դործերը կ'ընէք. այն առնն ըսին անոր, Մենք պտռնկութենէ չենք ծնած, մենք մէկ Հայր ունինք, որ է Աստուած: Յիսուս ըսաւ անոնց, Նի՞մէ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս. վասն զի ես Աստուծո՞ւմէ ելայ ու եկայ. եւ ոչ թէ ես ինքիրմէս եկայ, հապա անիկա զիս զրկեց: Ինչո՞ւ դուք իմ զրուցուածքս չէք հասկնար. անոր համար որ չէք կրնար իմ խօսքս մտիկ ընել: Դուք ձեր հօրմէն Աստանայէն էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ուղէք ընել. անիկա սկիզբէն հեռէ մարդասպան էր, եւ ճշմարտութեան մէջ չկեցաւ, վասն զի անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ. երբ անիկա ստութիւն խօսի, բուն իրեններէն կը խօսի, քանզի անիկա ստախօս է եւ անոր հայրը: Եայց որովհետեւ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինձի չէք հաւատար»:

Ներկայիս կղերներն են որ ժողովուրդը կը զրդեն աստուածային պատգամը պարունակող զբրքերը այրել, եւ նոյն կղերական դասակարգն է որ ճշմարտութեան պատգամը ժողովուրդին ներկայացնող ՅՏովայի վկաները ձերբակալել, հալածել ու բանտարկել կու տան: Յիսուս որոշապէս անոնց մտածանշելով յայտնեց թէ՛ անոնք Աստանային սերունդը կամ ներկայացուցիչները եւ Աստուծոյ ու Անոր թաղաւորութեան հակառակորդներն էին: Ահա այդ պատճառաւ է որ ՅՏովայի վկաները կը հալածուին այդ կեղծմուրներուն կողմէն:

Ես բնաւ փափաք չունիմ ունէ մէկուն վնաս հասցնելու: Իմ Հանքս չէ կղերներուն կամ ուրիշ ունէ մէկուն հետ հակաճառութեան մէջ մանել. սակայն երբ ժողովուրդին առջեւ իբրեւ Աստուծոյ ներկայացուցիչները եւ քարոզիչները կանգնող մարդիկը օրէնքին «զօրաւոր—բազուկ դունդ»-ը (պարզ կամ դադանի ստախաններ) օգնութեան կը կանչեն՝ թոյլ չտալու համար որ մարդիկ ճշմարտութիւնը ընդունին ՅՏովայի վկաներուն ձեռքէն, այդ պարագային իմ պարտականութիւնս կը դառնայ բացայայտօրէն խօսիլ՝ որպէս զի ժողովուրդը կարենայ պատշաճ կերպով ըմբռնել հարցը: Ես

այն ամբաստանութիւնը կը բերեմ՝ թէ՛ կաթուղի եւ թէ՛ Բողոքական կղերներուն դէմ թէ՛ անոնք դիտակցօրէն ժողովուրդը կ'արգելեն ճշմարտութիւնը ընդունելէ, եւ հետեւաբար՝ ներկայիս երկրիս վրայ եղած տագնապին իրական պատճառին ու անոր բուն դարմանին մասին ժողովուրդը տղէտ կը պահեն. եւ Յճովայի Վկաները ձերբակալելով ու բանտարկելով այդ բանը գլուխ հանելու ու բովանդակ ժողովուրդին վնաս հասցնելու համար կղերները իրենց օգնութեան կը կանչեն օրէնքին պաշտօնեաները, որոնք իրենց դաշնակիցներն են:

Յճովայի Վկաները, Աստուծոյ պատուէրին հնազանդելով, այժմ ժողովուրդին կը խօսին Սուրբ Գրոց մէջ դտնուած ճշմարտութիւններուն մասին թէ՛ այս աշխարհի թագաւորութիւնները բռնապետական են՝ ինչու որ Սատանան է անոնց անտեսանելի իշխանը. թէ՛ քիչ ատենէն՝ Աստուած հիմնովին պիտի կործանէ Սատանային կազմակերպութիւնը. թէ՛ աշխարհի միակ յոյսն է արդարադատ իշխանութիւն մը՝ Գրիստոս ըլլալով անոր գլուխը. թէ՛ Աստուծոյ թագաւորութիւնը երկրիս բոլոր ժողովուրդներուն պիտի բերէ խաղաղութիւն, բարգաւաճութիւն, երջանկութիւն, ազատութիւն եւ մշտնջենական կեանք, եւ թէ՛ հնազանդները այդ ատեն յաւիտեան երկրիս վրայ պիտի ապրին: Կղերները կ'ուրանան թէ Ս. Գիրքը այսպիսի ճշմարտութիւն կը պարունակէ: Ժողովուրդը իրաւունք ունի դիտնալու, եւ հետեւաբար իրաւունք ունի լսելու, թէ ասիկա ճշմարտութիւնն է թէ ոչ: Եթէ Յճովայի Վկաներուն կողմէ ժողովուրդին ներկայացւած պատգամը ճշմարիտ է, այն պարագային մարդկութեան համար ամենակարեւոր բանն է ատիկա: Եւ եթէ ան սուտ է, այն պարագային՝ այդպէս յայտարարող կղերներուն պարտականութիւնն է քաջարար յառաջ դալ եւ բացորոշապէս ըսել ժողովուրդին թէ այդ պատգամը ինչ կերպով սուտ է: Այս պատգամը ընդհանուր ժողովուրդին հասցնելու ամենալաւ միջոցը բէտիօն է:

Հետևաբար՝ Քրիստոսի Եկեղեցիներուն Ամերիկեան Գաղնակցութիւն կոչուած կաղմակերպութեան, ինչպէս նաև թէ՛ Կաթոլիկ եւ թէ՛ Բողոքական բոյր կաղմակերպութիւններուն հրաւէր կուտամ՝ որ իրարու քով դալով խորհրդակցին եւ իրենց մէջէն բնորէն մէկը՝ որ իրենց թարգմանը ըլլայ բէտիոյով կատարուելիք համադրային վիճարանութեան մէջ: Թող իրենք յանձն առնեն վճարել ծախսին կէտը: ՆՏովայի վկաները պիտի վճարեն միւս կէտը: ՆՏովայի վկաներն ալ պիտի ընտրեն մէկը որ այդ վիճարանութեան մէջ իրենց թարգմանն ըլլայ: Թո՛ղ ժողովուրդը լաւ պատահութիւն մ'ունենայ լսելու եւ վճռելու թէ՛ ո՛րն է ճշմարտութիւնը: Ես կղերնեալն զէմ այն ամբաստանութիւնը կը բերեմ թէ՛ անոնք ժողովուրդին թոյլ չեն տար որ ճշմարտութեան տեղեկանան, ուստի կ'առաջարկեմ որ հետեւեալ կէտերուն շուրջ դառնայ վիճարանութիւնը.

ՎՃՌՈՒՄԻՆ Է թէ՛ (ա) Թէ՛ Կաթոլիկ եւ թէ՛ Բողոքական, ինչպէս նաև Հայաստանեայց Եկեղեցւոյ կղերները ՆՏովա Աստուածն ու Քրիստոսը չեն ներկայացներ, այլ թէ՛ անոնք Բանասրկու Սատանան կը ներկայացնեն ու անոր կը ծառայեն.

(բ) Թէ՛ կղերները՝ Ս. Գրոց մէջ յայտնուած ՆՏովա Աստուծոյ ու Անոր թաղաւորութեան մասին ճշմարտութիւնը չեն քարոզեր ժողովուրդին, հետևաբար՝ իրենք ու իրենց եկեղեցական կաղմակերպութիւնները ժողովուրդին լաւազոյն շահերուն համար վնասարեւ են.

(գ) Թէ՛ Ս. Գիրքը բացորոշապէս կ'ուսուցանէ՛ որ ներկայ սերունդին կենաց շրջանին՝ ՆՏովա Աստուած կատարելապէս պիտի ոչնչացնէ Սատանային կաղմակերպութիւնը, անոր հետ նաև երկրիս ներկայ կառավարութիւնները, եւ թէ՛ Աստուծոյ ու Անոր թաղաւորութեան համար կանգնելով՝ հեղութիւն ու արդարութիւն վնասող անհատներն են միայն՝ որ կրնան յուսալ այդ նեղութեան շրջանին աղաւթիլ, եւ թէ՛ Աստուծոյ թաղաւորութեան օրէնքին ծառայող ու հնազանդողներուն յաւիտենա-



կան կեանք պիտի շնորհուի այս երկրիս վրայ՝  
խաղաղութեամբ ու բարգաւաճութեամբ.

(դ) Թէ՛ ՅՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ՛ ըջտիոյ  
յով ու դրահանութեամբ ներկայիս ժողովուրդին  
ընծայուած պատգամին հակառակողները Ստուծոյ  
դէմ է որ կը կոուին եւ իրենց այդ ընթացքին հա-  
մար Տիրոջ ձեռքէն արդար հատուցու՞մ պիտի  
ստանան :

Կը խնդրեմ որ ունկնդիրներս մասնաւոր կեր-  
պով պահանջեն՝ որպէս զի կղերները ընդունին այս  
մարտահրաւէրը եւ այս վիճարանութեան համար  
կարգադրութիւն ընեն, ապա թէ ոչ՝ թող խոստո-  
վանին ժողովուրդին թէ իրենք սխալ են եւ յաւէտ  
դադրին ՅՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԵՐԸ հալածելէ : Ամէն ա-  
նոնք որ ՅՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ՛ն կամ անոնց  
հակառակ են՝ թող նամակ մը դրեն ինծի իրենց  
ըջտիոյի կայանին հասցէով, պահանջելով որ ժո-  
ղովուրդին շահուն համար այդպիսի հրապարակա-  
յին վիճարանութիւն մը տեղի ունենայ : Են այդ  
նամակները հանրային մամուլին պիտի ներկայա-  
ցրենեմ, որպէս զի ժողովուրդը տեղեակ ըլլայ ան-  
ցած դարձածէն :

### ԻՐԱՒՈՒՆՔ

ՅՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԵՐԸ կը յայտարարեն թէ իրենք  
իրաւունք ունին զոնէ դուռ շրջելով՝ դրահանու-  
թեանց միջոցաւ աւետարանը քարոզելու, ինչու որ  
ատիկա իրենց աստուածատուր իրաւունքն է : Ըմ-  
բռնելով թէ ոչ մէկ նահանգ կամ քաղաքապետու-  
թիւն կրնայ պատշաճօրէն արդելք հանդիսանալ այդ  
իրաւունքին՝ Միացեալ Նահանգաց Սահմանադրու-  
թիւնը գծողները ատոր մէջ մտցուցին կրօնական  
ազատութեան օրէնքը, թէ՛ իւրաքանչիւր անհատի  
իրաւունքն ու առանձնաշնորհն է իր ընտրած կեր-  
պով զՍտուած պաշտել՝ առանց արդելքի : Ոչ մէկ  
նահանգ, քաղաք կամ քաղաքապետութիւն կրնայ  
Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան հակա-  
ռակ օրէնք անցնել : ՅՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԵՐԸ՝ սահմա-  
նադրական այդ իրաւունքին վրայ յենած՝ աւե-


տարանը քարոզելու համար կառավարութենէն արտօնութիւն չեն խնդրեր, հասցա անոնք կը յայտարարեն ու կը պնդեն թէ՛ Սմերիկայի ու անոր դանդան նահանգաց հիմնական օրէնքը ուէ՛ պաշտօնէի կամ անհատի ամենեւին արտօնութիւն չըտար արդարօրէն արդեւլք հանդիսանալու՝ աւետարանը քարոզելու համար Նեոփայի վկաներուն ցոյց տուած դործունէութեան:

Նեոփա Աստուած՝ ներկայիս երկրիս վրայ եղող Իր վկաներուն պատուէր տուած է Սատանային կազմակերպութեան նկատմամբ Իր վրէժխնդրութեան օրը յայտարարելու եւ սղաւորներու միլիթարութեանը համար ալ քարոզելու Իր թաղաւորութեան բարի լուրը: Ս. Գրոց մէջ արձանագրուած այդ վճռական պատուէրներէն մէկ քանիններն են հետեւեալները. «Գուք իմ վկաներս էք ... թէ ես եմ Աստուած» (Եսայ. ԽԳ. 12): «Տէրը բոլոր ամբարիշտները կը կորսնցնէ» (Սաղմ. ՃՅԵ. 20): «Մեր Աստուծոյն վրէժխնդրութեան օրը հրատարակել» (Եսայ. ԿԱ. 2): Այս համարները ցոյց կուտան թէ՛ ամէն անոնք որ ուխտած են Աստուծոյ կամքը կատարել, պարտաւոր են ժողովուրդին յայտարարելու թէ՛ Նեոփան է Աստուած, թէ՛ Սատանան ու անոր կազմակերպութիւնը Աստուծոյ թըշնամիններն են եւ պիտի ոչնչացուին որպէսզի մարդկութիւնը աղատադրուի: «Քրիստոնեայ Աշխարհ»-ը այն հրօծական տարն է որ խարերայօրէն կը յայտարարէ թէ ինք Քրիստոսը կը ներկայացնէ, եւ սակայն իրապէս Սատանային կազմակերպութեան մէկ մասն է: Նեոփան Իր վկաներուն կու տայ Եզեկիէլի Գ. 8-1 -ին մէջ արձանագրուած սա պատուէրը. «Ահա անոնց երեսին դէմ քու երեսդ պինդ, ու անոնց ճակատին դէմ քու ճակատդ պինդ ըրի. անոնցմէ չվախնաս ու անոնց երեսէն չզարհուրիս, թէ եւ անոնք ապստամբներու տուն են: ... եւ դնա ... անոնց խօսէ եւ անոնց ըսէ, Տէր Նեոփա այսպէս կ'ըսէ, թէ՛ մտիկ ընեն եւ թէ՛ դանց ընեն»: Մատթէոսի ԻԳ. գլուխով պատուէր կը տրուի աւետարանը քարոզելու, եւ ապա կը յայտնուի թէ՛



Գ. թ. 33

«Եթէ Աստուծոյ առջև ուղիղ է որ Աստուծո՛վ աւելի մեղի  
մտիկ ընենք, դուք դատեցէ՛ք» — Գործք Դ. 19, տես էջ 46-ը:



Գ. Թ. 1933

Եհովայի Վկաները միևնույն դիրքին մէջ, տես էջ 46-ը:



Երբ վկայութեան այդ դործը լրանայ՝ ատկէ անմիջապէս վերջ վրայ պիտի հասնի այն ամենամեծ նեղութիւնը զոր աշխարհ երբեք տեսած ըլլայ: Յիսուս Քրիստոսի վկայութիւնը յանձնուած է Յհովայի Վկաներուն, ու այդ պատճառաւ Սատանան ու անոր դործակալները կը ջանան դանոնք ու անոնց դործը փճացնել: Յայտ. ԺԲ. 17-ին մէջ բացորոշապէս յայտնուած է այս կէտը:

Յիսուսի առաքեալները՝ աւետարանը քարոզելնուն համար քաղաքներէն արտաքսուեցան, հալածուեցան ու բանտարկուեցան: Պետրոս, երբ ուրիշներուն հետ դատարանին առջեւ ինքզինք կը պաշտպանէր՝ ըսաւ. «Եթէ Աստուծոյ առջեւ ազէկ է որ Աստուծմէ աւելի ձեզի մտիկ ընենք, դուք դատեցէք: ... Առաւել Աստուծոյ հնազանդիլ պէտք է քան մարդոց» (Գործք Դ. 19, Ե. 29): Յհովայի Վկաներն ալ ներկայիս ահա այդպէս կ'ըսեն ամէն անոնց որ կը ջանան զիրենք արգելել Աստուծոյ թագաւորութեան աւետարանը քարոզելէ:

Մանայն քաղցրութեամբ, բայց հաստատակամօրէն ու առանց մարդէ կամ Սատանայէն վախնալու, այժմ կ'ըսեմ դատարաններու դատաւորներուն, ոստիկաններուն, կեղծաւոր կղերներուն եւ կառավարութեան օրէնքին ետին պահուիլ ջանացող իրենց ծառաներուն, թէ Յհովայի Վկաները պիտի շարունակեն Աստուծոյ թագաւորութեան աւետարանը քարոզել այն կերպովն ու միջոցովը զորս Յհովա Աստուած հայթայթած ու պատուիրած է, եւ անոնք ատիկա պիտի ընեն իրենց կեանքի գնովն իսկ՝ եթէ հարկ ըլլայ: Ա՛լ հասած է ժամանակը որ մըլտրնջենապէս վճուուի այն մեծ հարցը թէ ո՞վ պիտի տիրէ աշխարհիս, Յհովա՞ն թէ Սատանան: Աստուած ատիկա ուղիղ կերպով պիտի վճուէ, եւ իր կամքն ու պատուէրն է որ այդ բանը ընելէ առաջ իշխողներուն ազդարարութիւն տրուի եւ ժողովուրդին միխթարութեանը համար ալ պատգամը քարոզուի: Ի՞նչ է ճղճիմ մարդը որ կարենայ Յհովա Աստուծոյ դէմ մարտնչիլ: Յհովայի Վկաները իբրեւ մարդկային արարածներ դոյզն կարեւորութիւն

ունին, սակայն գերազանցապէս կարեւոր են ՆՀՈՎ-  
յան ու Անոր թաղաւորութիւնը: ՆՀՈՎԱ Աստուած  
Իր պատգամը կը գրկէ Իր վկաններուն միջոցաւ:  
Ամէն անոնք որ պատգամին հակառակութիւն ցոյց  
կուտան, ինքզինքնին վտանգի կ'ենթարկեն: Թող  
բոլոր այդպիսիները զուշանան: Ձեր մէջէն օրէնքի  
պաշտօնեայ եղողներէն ամէն անոնք որ կը փափա-  
քին կեղծաւոր կղերներէն տակաւին խարուիլ, եւ  
տակէ մղուած՝ ՆՀՈՎԱյի վկանները ձերբակալելով,  
հալածելով ու բանտարկելով կը կասեցնեն ասուա-  
ծային պատգամին յայտարարութիւնը՝ ինքզինքնին  
մեծ պատասխանատուութեան տակ կը դնեն: Որպէս  
ՆՀՈՎԱյի վկաններէն մին, այժմ ձեր ուշադրութեան  
կը յանձնեմ Սաղմ. Բ. 8-12-ին մէջ տրուած խրա-  
տար: ՆՀՈՎԱն ատով կը յայտարարէ թէ Իր նպա-  
տակն է ոչնչացնել Իր թաղաւորութեան յառաջաց-  
ման արդեւք հանդիսացողները, բնելով. «Ուստի  
հիմա, ով թաղաւորներ (իշխողներ), միտքերնիդ  
տոէք (իմաստուն եղէք), երկրի դատաւորներ խրատ-  
ւեցէք: Երկիւղով Տիրոջ ծառայեցէք, ու դողալով  
ցնծացէք: ... որ ճամբուն մէջ չկորսուիք, երբ ա-  
նոր բնակութիւնը քիչ մը բոբբօք»:

Արդարութիւնը սիրող եւ երկրիս վրայ արդա-  
բութեան հաստատուելուն փափաքող բոլոր անձե-  
րուն կը յորդորեմ որ այժմ Քրիստոսի իշխանու-  
թեան տակ գրուած ՆՀՈՎԱյի թաղաւորութեան կող-  
մը դիրք բռնեն: ՆՀՈՎԱյի վկանները՝ Անոր ճշմար-  
տութեան պատգամը պարունակող գրքերով ձեզի  
կը ներկայանան՝ որպէս զի դիտեաք թէ ի՞նչ ընելու  
էք: Եթէ կարելի է՝ ձեռք անցուցէք այդ գիրքերը եւ  
Ս. Գրքին օգնութեամբը Աստուծոյ մասին տեղեկու-  
թիւն ստացէք, ինչու որ Յովհ. Ժ. 3-ին մէջ գրը-  
ւած է թէ մի միայն անոնք յաւիտենական կենաց  
պիտի տիրանան՝ որոնք Աստուածն ու Քրիստոսը կը  
ճանչնան եւ Անոր թաղաւորութեան օրէնքին կը  
հպատակին:

Վստահելի աղբիւրէ տեղեկութիւն ստացած եմ՝  
թէ Ամերիկայի կղերները մտադրած են ՆՀՈՎԱյի  
վկանները ոչնչացնելու: Էդպլըրի Փարք, Ն. Ծ. -ի մէջ

բնակող կղերմը վերջերս սա յայտարարութիւնը քրաւ. «Այս ամբողջ խումբը (Յհովայի Վկաները) պէտք է բանտ նետուին եւ Գատաւոր Բըթհըրֆորտն ալ սպաննուելու է ելեկտրական աթոռի վրայ»: Սատանան ու անոր դործակալները պատերազմ յայտարարած են անոնց հանդէպ՝ զորս Յհովան կը դրկէ Իր վկայութիւնը տալու համար: Թող անոնք իրենց կրօնացիներէն ամենավատը ընեն: Այն որ մեղի հետ է՝ բոլոր մեղի դէմ եղողներէն աւելի զօրաւոր է: Ուստի Յհովայի Վկաներուն, իմ եղբայրներուս, ուղղելով իմ խօսքս, անոնց ուշադրութեան կը յանձնեմ Ամենակարողին հետեւեալ պատուէրը. «Այն օրը ... Մի՛ վախնար, ու ... Զեռքերդ չթուլնան» (Մովսէս. Գ. 16): Յառաջ տարէք Անոր պատգամը ժողովուրդին տալու ձեր դործը, հոգ չէ թէ թըշնամին ի՞նչ կ'ընէ:

Ներկայիս՝ «Գրիստոնեայ Աշխարհ»-ի մէջ միլիոնաւոր բարեացակամ մարդիկ կան՝ որոնք կ'ողբան ու կը հառաչեն թէ՛ եկեղեցիներուն մէջ եւ թէ՛ անոնցմէ դուրս կղերներուն բրած դարչելի ու հակաքրիստոնէական բաներուն համար: Յիշեցէք Եզեկիէլի Թ. 4-ին մէջ Աստուծոյ ձեզի տրուած պատուէրը որ կ'ըսէ. «Երուսաղէմի (Գրիստոնեայ Աշխարհ-ի) մէջէն անցիր, ու անոր մէջ եղած բոլոր պղծութիւններուն համար հառաչող ու ողբացող մարդոցը ճակատներուն վրայ նշան դիր» (Տես անդրէրէն Վիկտորի Բ. Երբէն հատոր Ա.-ին 94-115 էջերը): Ճակատներուն վրայ նշան դնելը՝ Աստուծոյ նպատակներուն մասին իմացական ըմբռնում մը կը շնորհէ մարդոց՝ Անոր ճշմարտութեան պատգամին հետ շիւքան մէջ դնելով զանոնք: Միլիոնաւոր բարեացակամ մարդիկ խոր մտահոգութեան մէջ են, ինչու որ անոնք կը տեսնեն թէ կղերները կը մերժեն Ս. Գիրքը, եւ Ս. Գրոց ճշմարտութիւնները քարոզող հաւատացեալ մարդոց եւ կիներու դէմ մղուած հալածանքներուն նկատմամբ ալ աչք կը դոցեն: Այս բարեացակամ մարդիկը մեծապէս կարօտ են ճշմարտութեան, եւ կ'ուզեն հասկնալ զայն: Ուրեմն կոչ կ'ընեմ ձեզի՝ ո՛վ իմ սիրեցեալ եղբայր-

ներս, որ կատարելապէս ապաւինելով Եհովա Աստուծոյ զօրութեանը՝ յառաջ բնթանաք եւ ժողովուրդին համար Անոր դրօշակը վեր բարձրացնէք, որպէս զի անոնք կարող ըլլան տեսնել ճշմարիտ ազատագրութեան ճամբան, եւ դուք ալ բաժին մ'ունենաք Եհովա Աստուծոյ մեծ ու սուրբ անուան ջատագովութեանը մէջ:

Սիրելի հայորդի, այս ողևորիչ բանախօսութիւնները կարդալէ վերջ, չէ՞ք փափաքիր Աստուծոյ արդարազատ թաղանթութեան մասին աւելի տեղեկութիւններ ստանալ: Դարուս աշխարհահռչակ աստուածարանին, Դասաւոր Բրթերֆորտի, զրած բաղձաթիւ դրքերէն ու դրքոյկներէն 10 հատ ալ Հայերէնի թարգմանած ենք, որոնք աւելի մանրամասն բացատրութիւններ կուտան՝ Եհովայի նպատակներուն եւ Անոր երանաւէտ կառավարութեան քաղաքացիներն ըլլալու պայմաններու մասին: Եթէ կ'ուզէք, պատրաստ ենք մեր թէ՛ Հայերէն եւ թէ՛ ՅՕ-ի չափ ուրիշ լեզուներով հրատարակած զրահանութեանց լիակատար ցուցակը ձեզի գրկելու: Մեր հաղէին համար՝ տես այս զբօրոյկին երկրորդ կամ վերջին էջը:

Դիտարանը



**Ա**ՆՈՆՔ որ Ս. Գրքին տեղեակ չեն, չեն կրնար լիովին հասկնալ սէր բառին նշանակութիւնը: Շատ մարդիկ երգեր կ'երգեն՝ զորս իրենք սիրոյ երգեր կը կոչեն, սակայն իրապէս անոնց երգածը յուղումի (փէշըն) արտայայտութիւններ են: Յուղումի արտայայտութիւնը դրեթէ միշտ եսասիրութենէ դրդուած է: Աշխարհիկ բառադէտներ սէր բառը հետեւեալ կերպով կը սահմանեն. «Հաճոյք տուող բանիմը համար սաստիկ միտում» Այս սահմանը շատ հեռու է ուղիղ բլլալէ:

Սէր բառին մասին Ս. Գրոց տուած եւ հետեւաբար ուղիղ սահմանը հետեւեալն է. «Անեսասիրութեան կատարեալ արտայայտութիւնը»: Ասիկա ո՛չ միայն կը նշանակէ ուրիշի մը հանդէպ անեսասէր զգացում մ'ունենալ, հասլա նաեւ ան կը նշանակէ այդ զգացումը կերպով մ'արտայայտել: Եթէ մէկը՝ ուրիշին բարիք մը կ'ընէ եւ ատոր փոխարէն բան մը կ'ակնկալէ, այդ անհատին շարժառիթը եսասիրութիւն է, եւ ոչ թէ սէր: Առանց փոխարինութեան՝ մէկուն կողմէն եղած ձրի պարզեւ մը, ուրիշի մը շնորհուած բարիք մըն է. եւ ձրիապէս ու անեսասիրաբար եղած այսպիսի պարզեւ մը սէրէ դրդուած է: Եհովա Աստուածն է՝ ճշմարիտ եւ միակ Պարզեւիչը բոլոր բարի բաներու: Յակորու Ա. 17-ին մէջ գրուած է. «Ամէն բարի տուրք ու ամէն կատարեալ պարզեւ վերէն է, եւ լուսոյ Հորմէն կ'իջնէ, որուն մէջ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու շուք մը չկայ»: Այս համարը կ'ապացուցանէ թէ Եհովան է բոլոր բարի բաներու Պարզեւիչը:

Ա. Յովհ. Դ. 8-ին մէջ գրուած է. «Աստուած սէր է». եւ բոլոր իրողութիւնները ցոյց կու տան թէ Եհովայի մասին եղած այս արտայայտութիւնը բացարձակապէս ուղիղ է: Եհովա Աստուած կատարելապէս անեսասէր է: Չկայ արարած մը որ կրնայ Եհովայի շահ մը բերել: Եհովայի արարածները իրեն

հանոյք կը պատճառեն իր կամքը կատարելով, բայց անոնք երբեք չեն կրնար Անոր ունէ շահ մը բերել: Ուստի, ամէն բան որ ՅՏովա կը պարզուէ մարդոց, անհաստիքաբար կու տայ, առանց փոխարինութիւն մ'ստանալու ակնկալութեամբ:

Յովհ. Գ. 16-ին մէջ գրուած է թէ Աստուած այնպէս սիրեց մարդկային աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդին զրկեց մեղքութեամբ համար, որպէս զի ամէն ո՛վ որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ: 60 դարերէ աւելի է որ մարդկային ազգը հիւանդութիւններու, նեղութիւններու եւ մահուան ենթարկուած է: Այս բոլորին բուն պատճառը այն է, որ մարդիկ զԱստուած չեն սիրեր: Եսասիրութիւնն էր որ Սատանան մղեց Աստուծոյ հակառակելու: Կատարեալ մարդը, Ադամ, զխտակցօրէն դրժեց Աստուծոյ օրէնքը եւ Սատանային միացաւ: Ադամին մեղքին պատճառաւ ամբողջ մարդկային ազգը մահուան դատապարտութեան տակ եկաւ: Վերջ ի վերջոյ ամբողջ մարդկային ազգը իբրևամբ եւ կատարելապէս պիտի բնաջրնջուի, եթէ ՅՏովա Աստուած իր զթառատ ողորմութեամբը չվերկէ դանոնք: ՅՏովա՝ բոլորովին եւ անհաստիքաբար նուիրուած է արդարութեան դատին համար: Մարդիկ չեն կրնար ինքզինքնին ազատել այն ստակալի վիճակէն, ուր որ մեղքը զիրենք մը խորճած է: Ուստի ՅՏովա՝ աշխարհ զրկեց իր սիրեցեալ Որդին. իբրև կատարեալ մարդ՝ Նա մեռաւ մեղաւոր մարդուն համար, որպէս զի մարդկային ազգէն ով որ հաւատայ Անոր կեանք ստանայ (Յովհ. Ժ. 37, 38, ԺԳ. 11, 12): Հաւատալ կը նշանակէ՝ ո՛չ միայն լսել մէկու մը կամ բանի մը մատին, հապա նաև ինքզինքը լիովին նուիրել այդ բանին՝ իր ստացած լոյսին համեմատ: Հոովմ. 2. 23-ին մէջ գրուած է թէ՝ Աստուծոյ պարզելը յաւիտենական կեանք է՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Այս մեծ եւ անդին պարզելն էր որ ՅՏովա տուաւ՝ մարդուն օգտին եւ բարօրութեան համար: Այս մեծ ճշմարտութիւնն էր որ ներշնչեց առաքեալը զրելու հետեւեալ խօսքը. «Գոհութիւն

Աստուծոյ՝ անոր անպատում պարզելին համար» (Բ Կորնթ. Թ. 15) : Ասոր նման անեսասիրութեան արտայայտութիւն մը բնաւ տեսնուած չէ, եւ ստիկա կ'ապացուցանէ թէ Աստուած սէր է :

Ինչո՞ւ համար Յիսուս կը կոչուի Աստուծոյ սիրելի Որդին : Որովհետեւ Յիսուս միշտ եւ ուրախութեամբ Իր Հօրը կամքը կը կատարէ : Սաղմ. Խ. 8-ին մէջ Անոր մասին գրուած է. «Ով իմ Աստուածս, քու կամքդ կատարելու փափաքեցայ, քու օրէնքդ իմ ներսիդիս է» : Պէտք էր որ կատարեալ Յիսուսը մեռնէր մեղաւորին տեղը, որպէս զի մարդկային ազգը ազատուէր մահուան դատապարտութենէն եւ ապրելու պատեհութիւն մ'ունենար : Եհովայի կամքն էր որ Իր սիրելի Որդին մարդ մ'ըլլար եւ մեռնէր մեղաւորին տեղը : Յիսուս երկրի վրայ եղած ատեն՝ երբ մարդկային ազգը փրկելու համար Եհովայի ունեցած նպատակին մասին կը պատմէր, Նա ըսաւ թէ Իր Հայրը զինք կը սիրէ, որովհետեւ Նա ուրախութեամբ կը հնազանդի Իր Հօրը կամքին : Այս իրողութեան համաձայն էր որ Եհովա ըսաւ Յիսուսի մասին. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւնեք եմ»-- Մատթ. Գ. 17 :

Եհովայի օրէնքը, որ նախ Իսրայէլի տրուեցաւ եւ յետոյ Յիսուսի կողմէ հաստատուեցաւ, կ'ըսէ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրբտովդ» (Բ. Օրինաց 2. 5, Մատթ. ԻԲ. 37) : Ասիկը նշանակէ թէ՛ արարածը պէտք է որ բացարձակապէս եւ անեսասիրաբար ինքզինքը Եհովայի նրբերէ, եթէ կ'ուզէ Անոր հաճելի ըլլալ : Եթէ մէկը կը դաւանի Քրիստոս Յիսուսի հետեւորդն ըլլալ, ու նա այդ քայլը կ'առնէ՝ պարզապէս իր ուղած մէկ բանը ձեռք ձգելու նպատակաւ, այդպիսի մէկը սէրէ դրդուած չէ : Սակայն եթէ մէկը ինքզինք բոլորովին եւ իսրաէ Եհովա Աստուծոյ կը նուիրէ, որովհետեւ Աստուած սուրբ եւ արդարադատ ըլլալով՝ արժանի է բոլոր արարածներուն պաշտանքին, ահա այն ատեն կրնայ ըսուիլ թէ այդ անձը սէրէ դրդուած է :

Աստուած ինչո՞ւ պատուէր տար որ մարդիկ դի՛նք սիրէին: Մարդկային ազդին փորձառութիւնը, Ա. Գրոց համաձայն, խիստ լիակատար պատասխանը հու տայ այդ հարցման: Եթէ Ադամ սիրած ըլլար զԱստուած՝ նա անխոհեմաբար Սատանային ծուղակին իյնալով մահուան պիտի չ'ենթարկուէր, եւ իր սերունդին վրայ դատապարտութիւն պիտի չբերէր: Անձնասիրութիւնն էր որ դանիկա մղեց մեղանչելու, ինչու որ ան փափաքեցաւ սահել բան մը (եւան) որ իրեն համար սիրելի կը նկատէր: Երբ Աստուած Իսրայէլը Իրեն իբր ժողովուրդ ընտրեց, նա էապէս ըսաւ անոնց թէ՛ իրենց անձերը բացարձակապէս Իրեն՝ եւ ոչ թէ ուրիշի մը՝ նւիրելով էր միայն որ իրենք պիտի կրնային ապահովութիւն դանել: Եթէ անոնք իրենց ուխտին հնազանդելով ըրած ըլլային այդ բանը՝ իրենք պիտի չիյնային: Եթէ քրիստոնէութիւն դաւանողները բացարձակապէս ու անշահախնդրաբար ինքզինքնին Աստուծոյ նուիրած եւ Սատանային աշխարհէն անջատ ըլլալով՝ ուէէ կասիրական առնչութիւն չունենային անոր հետ, իրենց ներկայ դժբախտ վիճակին մէջ պիտի չդանուէին: Ասոնք բոլորը կ'ապացուցանեն թէ՛ ուրիշ աստուած մը չունենալու մասին Եհովայի ասուած պատուէրը ժողովուրդին բարօրութեանը համար է, հետեւաբար առիկա Աստուծոյ անհասիրական մէկ արարքն է: Սատանային հետեւողները իրենց տառապանքի վարձը կը հնձեն առատապէս:

Շատեր կը խորհին թէ՛ իրենք պարտական են իրենց ընկեր արարածներուն հանդէպ իրենց սէրը արտայայտել՝ խօսքերով կամ արցունք թափելով եւ կամ իրենց եղբայրներուն վիզէն կախուելով: Ասոնք ոչ թէ սիրոյ՝ հապա յուզումի (փէշըն) արտայայտութիւններ են: Եղբայրը սիրել կը նշանակէ անոր բարիք ընել՝ հոգ չէ թէ անիկա այդ մասին տեղեկութիւն ունեցած ըլլայ թէ ոչ: Երբ մէկը խակապէս կը սիրէ ուրիշ մը՝ նա պէտք չունի առիկա միւսին յայտնելու, եւ ոչ ալ նա պէտք ունի ըսելու թէ իրեն ի նպաստ բան մ'ըրած է: Երբ իր



եղբորը կամ դրացիին բարիք ընելու պատահութիւն ներկայանայ իրեն՝ նա այդ բանը կը կատարէ առանց փոխարէնը ունէ բանձը յուսալու կամ ակընկալելու: Անհասարկութիւնը կամ սէրն է որ մղած է զինք այդպէս ընելու կամ վարուելու:

Շատեր կ'ըսեն. «Ես Աստուած կը սիրեմ»: Ինչէ՞ն կ'ընանք դիտնալ թէ մէկը Աստուծոյ նկատմամբ սէր ունի: Անշուշտ ոչ թէ իր խօսքերէն, եւ ոչ ալ պարզապէս ուղիղը ընելու իր ջանքերէն: Մենք ատոնցմէ ա'լ աւելի անդին պէտքէ անցնինք: Յիսուս աշխարհէս մեկնելէ քիչ առաջ՝ երբ աշակերտները կը յորդորէր՝ ի միջի այլոց ըսաւ անոնց. «Եթէ զիս կը սիրէք, իմ պատուիրանքներս պահեցէք: ... Ան որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է զիս սիրողը. եւ ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի. ու ես զանիկա պիտի սիրեմ, եւ ինքզինքս անոր պիտի յայտնեմ» (Յովհ. ԺԴ. 15, 21): Այս հաստատուած կանոնը ցոյց կու տայ թէ՛ մարդիկ Աստուծոյ նրկատմամբ իրենց սէրը երեւան կը բերեն՝ նախ Անոր կամքը հասկնալով եւ ապա փութաջանօրէն զայն ի դորձ դնելով:

Շատեր՝ փափաքելով երկինք երթալ՝ կ'ըսեն թէ զԱստուած կը սիրեն, հաւատալով թէ այդ կերպով իրենք պիտի կ'ընան երկնից մէջ ընդունուիլ: Ատիկա Աստուծոյ նկատմամբ սէր ունենալ չէ. հապա եսասիրական դիտումներով առնուած քայլ մըն է: Երբ մարդիկ կ'ըմբռնեն թէ Աստուած Մեծ Յաւիտենականն է, կենաց եւ բոլոր ուրիշ օրհնութեանց աղբիւրը, այդ ժամանակ անոնք պարտին յօժարակամօրէն Աստուծոյ կամքը կատարելու փափաքիլ, դիտնալով թէ Աստուած իրենց ինչ ալ որ տայ՝ ատիկա իրենց օգտին համար պիտի ըլլայ: Ոչ մէկ անհատ կ'ընայ զԱստուած հաճեցնել՝ եթէ Անոր ծառայէ մասնաւոր օրհնութիւն մը ստանալու պարզ յոյսով: Եհովա Աստուած Իր թաղաւորութեան կը հրաւիրէ կամ կը կանչէ միայն այնպիսիներ՝ որոնք անհասարար իրեն նուիրուած են:

Նա ամէն բան անոնց համար բարէի գործակից ընել կու տայ:

Ներկայ աշխարհը Սատանային կաղճակերպութիւնն է, որուն տեսանելի մասը կը բաղկանայ՝ նրկրիս կրօնական, քաղաքական եւ առեւտրական իշխող ուժերէն: Երբ մէկը կ'ըսէ թէ ինք Քրիստոս Յիսուսի հետեւորդ մըն է, խկ վերջէն ալ նրբ կ'ըսէ. «Նս կը սիրեմ աշխարհիս բաները եւ պարտականութիւն կը համարեմ իբրեւ Քրիստոնեայ քաղաքացի մը աշխարհի վերաբերեալ բաներուն միջամուխ ըլլալ», այդպիսի մէկը Աստուծոյ թշնամին է: Այդպիսիններուն նկատմամբ Յակ. Դ. 4-ին մէջ գրուած է թէ՛՝ Ով որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ, ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ՛: Իսկ Ա. Յովհ. Բ. 15-ին մէջ հետեւեալ խրատը տրուած է. «Մի սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է»: Աստուծոյ հաճելի եղողները պարտին բացարձակապէս Անոր նուիրուած ըլլալ:

Մենք այժմ հասած ենք ներկայ սատանայական աշխարհի վախճանին, եւ այդ ամբարիշտ կաղճակերպութիւնը մօտալուտ բնաջնջման դատապարտուած է: Եհովան այժմ կը յայտնէ թէ՛՝ զինքը սիրողները պարտին Իրեն ու Իր թագաւորութեան մասին վկայել ժողովուրդներուն: Ճիշդ այդ բանը պիտի ընեն բոլոր անոնք որ իրապէս զԱստուած կը սիրեն: Հիմակ է աշխարհիս կարգադրութիւնները դատելու ժամանակը, եւ այս խնդրոյն շուրջ գրուած է. «Ասով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որպէս զի համարձակութիւն ունենանք դատաստանին օրը. վասն զի ինչպէս է ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ: Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը վախը մէկուէ կը ձգէ. վասն զի վախը տանջանքի ենթակայ է. ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ» (Ա. Յովհ. Դ. 17, 18): Ամէն անոնք որ զԱստուած կը սիրեն ու կատարելապէս Անոր կը վստահին՝ բնաւ վախ չունին թէ մարդիկ կամ Սատանան ինչ կ'ըրնան ընել իրենց: Այդ պատճառաւ՝ անոնք դոնէ դուռ կը շրջին ժողովուրդին վկայելով Եհովայի

Թագաւորութեան, Եհովայի, ինչպէս նաեւ մօտ ա-  
տենէն աշխարհի նկատմամբ Անոր ի դորժ դնելիք  
դատաստանի մասին: Ահա այդ է պատճառը՝ որ  
ներկայիս հաւատացեալ այրեր ու կիներ ամէն տեղ  
կը շրջին՝ ժողովուրդին պատմելով Աստուծոյ ար-  
դարադատ Թագաւորութեան մասին: Ուրիշ ոչ մէկ  
կերպով անոնք կրնան իրենց սիրոյն ապացոյցը  
տալ: Կ'ակնկալուի որ անոնցմէ շատեր ձերբակալ-  
ւին, խոչտանգման ու սպառնալիքի ենթարկուին,  
բայց այդ բաները անոնց զործունէութիւնը չեն  
կրնար դադրեցնել, ինչու որ անոնք զԱստուած կը  
սիրեն ու Անոր պատուիրանքները կը պահեն: Ա-  
նոնք անեսասիրաբար Եհովայի նուիրուած են: Ա-  
նոնք Եհովայի ըրած բոլոր խոստումներուն կը հա-  
ւատան: Այդ խոստումներէն մին է. «Տէրը բոլոր  
դինք սիրողները կը պահէ, սակայն բոլոր ամբա-  
րիշտները կը կորսնցնէ»-- Սաղմ. ՃԽԵ. 20:

Յիսուս յայտնեց թէ՛ դատաստանի ներկայ ժա-  
մանակուան մէջ Եհովայի Վկաները հալածող մար-  
դոց դասակարգ մը պիտի ըլլար երկրիս վրայ, ո-  
րոնց նա «այծ» անունը տուաւ իրենց ամբարիշտ  
արարքներուն համար (Մատթ. ԻԵ. 31--33): Նա  
յայտարարեց թէ՛ այդ ամբարիշտները բացարձակ  
ոչնչացման պիտի ենթարկուին (Մատթ. ԻԵ. 41-46):  
Երբ Եհովայի Վկաները ձեր դուռը դարնեն՝ այծի  
բնաւորութիւն ցոյց մի՛ տաք անոնց հանդէպ, հա-  
պա անոնց պէս եղէք՝ զորս Տէրը կը նմանցնէ ոչ-  
խարներու, այսինքն նման անոնց՝ որոնք Աստուծոյ  
պատուէրները պահել ջանացողներուն հետ քաղցրու-  
թեամբ կը դարուին: Թերեւս դուք կարող չըլլաք՝  
անոնց կողմէ ձեզի ներկայացուած Ս. Գիրքը բա-  
ցատրող դրճերուն տպադրութեան եւ շրջաբերու-  
թեան ծախսերուն օգնելու. սակայն դուք կրնաք ա-  
նոնց խօսքերուն մտիկ ընել եւ Աստուծոյ ու Անոր  
Թագաւորութեան մասին ծանօթութիւն ստանալ:

Ինչպէս որ Աստուծոյ Խօսքը կը սորվեցնէ՛ սէրը  
զլիաւոր բանն է: Պիտի դայ ժամանակը՝ երբ բո-  
լոր մարդիկ անեսասիրութիւն ցոյց պիտի տան:  
Այդպէս՝ Քրիստոսի Թագաւորութեան օրով մարդիկ

աստուածանման պիտի ըլլան եւ Բարձրելոյն անու-  
նը պիտի փառարանեն :

Յիսուս Քրիստոսի հաւատարիմ հետեւորդները  
միշտ նեղութիւն կրած են Սատանային գործակալ-  
ներուն ձեռքէն . բայց որովհետեւ այս հաւատարիմ  
վիպաները զխտեն թէ Աստուած կը սիրէ զիրենք ու  
իրենք ալ զԱնիկա կը սիրեն՝ անոնք բնաւ պիտի  
չհեռանան Աստուծմէ՝ հոգ չէ թէ որքան ալ մեծ  
ըլլայ հալածանքը : Պօղոս ասոնց խրատանքներն  
սրտի անկեղծ զգացումները արտայայտեց երբ ը-  
սաւ . «Վասն զի ես հաստատ զխտեմ թէ ոչ մահը,  
եւ ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, եւ ոչ իշխա-  
նութիւնները, ու ոչ զօրութիւնները, եւ ոչ ներկայ  
բաները, ու ոչ դալու բաները, եւ ոչ բարձրութիւ-  
նը, ու ոչ խորութիւնը, եւ ոչ ուրիշ արարած մը  
կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս  
Յիսուս մեր Տիրոջմով է»-- Հոովմ. Ը. 38, 39 :

Գարձեայ՝ Ս. Գիրքը կ'ըսէ . «Քու ընկերդ քու  
անձիդ պէս սիրես» (Մատթ. ԺԹ. 19) : Ասիկա կը  
նշանակէ անհասիրաբար բարիք ընել մեր ընկեր  
արարածին, եւ ոչ թէ անոր չարիք հասցնելու հե-  
տամուտ ըլլալ եւ կամ անոր վնասին մէջ վնասուել  
մեր շահը : Գրուած է նաեւ թէ՛ Աստուած երկրիս  
վրայ բնակող բոլոր ազգերն ու մարդիկը մէկ ար-  
խնէ բրաւ (Գործք Ժէ. 26) : Ուստի մարդիկ իրա-  
բու ընկեր կամ դրացի են . եւ երբ ետախնդրութեան  
տեղ սէրը տիրէ՝ ամէն ոք իր ընկեր արարածին  
բարիք ընելու ետեւէ՝ պիտի ըլլայ : Աստուածային  
կանոնը այն է՝ թէ խրատանքներ մարդ անհասի-  
րաբար պարտի վարուիլ իր ընկեր արարածին հետ .  
եւ Աստուծոյ թաղաւորութեան չըջանին ահա այդ  
կանոնն է որ պիտի տիրէ :

Ամէն ոք զխտէ թէ՛ ներկայ Ժամանակիս մէջ  
բոլոր ազգերն ալ ետախրութեամբ է որ կը վար-  
ւին իրենց նմաններուն հետ : Եթէ ետախնդրութիւնը  
կամ սիրոյ պակասը չըլլար՝ մարդիկ ուտելիքի նե-  
ղութիւն պիտի չկրէին : Մարդկային մէկ դասակար-  
գը մեծաքանակ ուտելիք կ'արտադրէ՝ որուն կարօտ



են ուրիշները, եւ որովհետեւ ուտելիքը կամ ուրիշ պէտքեր շահագործողները կարող չեն՝ մեծ շահ ընելու՝ անոնք փճացնել կու տան ուտելիքը ու ժողովուրդը կը տառապի: Ազգերու վրայ իշխողները մաքսային օրէնքներ կ'անցնեն, որոնք անկարելի կը դարձնեն որ երկրի մը մէջ ուտեստեղէն ու հագուստեղէն արտադրող մը զանոնք աշխարհի մէկ ուրիշ մասին մէջ իր դրացիին հայթայթէ պատշաճ գնով մը եւ ընդհանուրին բարելաւութեանը համար: Ատոր իբր արդիւնք բոլոր ազգերու ժողովուրդները նեղութիւն կը կրեն: Եթէ շարժառիթը անեսախընդրութիւն կամ սէր ըլլար՝ այդպիսի եսասիրական օրէնքներ չպիտի անցուէին: Դարձեալ՝ ազգերը կ'անցնեն այնպիսի օրէնքներ՝ որոնք երկրէ մը ուրիշ երկիր ժողովուրդին ազատ դալթը անկարելի կը դարձնեն, եւ այդ ալ կը կատարուի եսասիրական դիտումով ու հակառակ Աստուծոյ օրէնքին: Դժուարութիւնը հոն է որ իշխողները իմաստուն խորհուրդով առաջնորդուած չեն: Առակ. ԺԱ. 14-ին մէջ կը կարդանք. «Ժողովուրդը առանց խոհականութեան կը կործանի. բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ»: Ծշմարիտ կամ իմաստուն խորհուրդը Աստուծոյ Խօսքն է. եւ եթէ իշխողները անեսասիրաբար այդ Խօսքով առաջնորդուին՝ հետեւանքը միշտ բարի պիտի ըլլայ ժողովուրդին համար: Քանի որ ժողովուրդը դեռ տաղնապի ու նեղութեան մէջ է, այդ կ'ապացուցանէ թէ ամբարիշտներն են իշխողները. մինչդեռ եթէ սէրն ու արդարութիւնը տիրէին՝ կացութիւնը ամբողջովին տարբեր պիտի ըլլար: «Եթէ արդարները դօրանան, ժողովուրդը կ'ուրախանայ. բայց երբ ամբարիշտը իշխանութիւն կ'ունենայ, ժողովուրդը կը հեծէ»-- Առակաց Իթ. 2:

Ներկայիս Ամերիկայի մէջ միլիոնաւոր անգործներ կան որոնք իրենց ապրուստը ճարելու միջոց մը չունին: Նմանօրինակ տաղնապալից կացութիւն մը կը տիրէ նաեւ ուրիշ ազգերու մէջ. սակայն՝ առատ գործ եւ պէտքեղածէն աւելի ուտելիք կայ: Ամէն ոք պարտի խոստովանիլ ու պիտի խոս-

տովանի թէ՛ բոլոր ազգերու ժողովուրդները կը հարստահարուին ու կը տառապին: Ո՞վ է այդ տառապանքներուն պատասխանատուն: Տեսանելի իշխանները իրենց ետասիրութեամբը չափով մը մեղադրելի են այդ բանին համար, սակայն այդ տառապանքներուն գլխաւոր պատասխանատուն Բանաստեղծ Սատանան է: Անիկա՛ է այս աշխարհի աստուածը կամ աներեւոյթ իշխանը: Նհոյան կը յայտարարէ թէ Ինք պիտի փճացնէ Սատանային զօրութիւնը եւ ամէն իշխանութիւն պիտի խլէ անկէ: Գրուած է. «(Անիկա) ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ, տնանկին զաւակները պիտի ազատէ, ու բռնաւորը պիտի ջարդէ» (Սաղմ. 26. 4): Այդ բոլոր կառավարութիւններուն կամ ազգութիւններուն հետ պիտի լինայ նաև Ամերիկայի կառավարութիւնը, ինչու որ ան բոլոր միւսներուն նման ետասիրական է: Բոլոր ետասիրական կառավարութիւնները պարտին տեղի տալ Աստուծոյ արդարադատ կառավարութեան, որուն գլուխը Քրիստոս պիտի ըլլայ: Ետասիրական կառավարութիւնները այլևս երկար չեն կրնար մնալ: Երբ մարդիկ իրական ճշմարտութեան տեղեկանան՝ իրենք պիտի ուրախանան ոսկեսաէր ու ամբարիշտ ազգերը մէջտեղէն պիտի վերնան: Ո՞վ է այն անկեղծ մարդը որ պիտի ուղէ միշտ կեղեքիչ ու ամբարիշտ իշխանութեան մը տակ ապրիլ: Անկատար կառավարութիւններուն անհետանալը ժողովուրդին օրհնութիւն մը պիտի ըլլայ: Նհոյա Աստուած սէր է եւ Քրիստոս Յիսուս Անոր բուն պատկերն է: Քրիստոս է երկրիս նոր Վեհապետը ու Նա արդարութեամբ պիտի իշխէ, որ կը նշանակէ թէ Անոր իշխանութիւնը սիրով՝ եւ ոչ թէ ետախնդրութեամբ՝ յառաջ պիտի տարուի: Ահա այդ կերպով պիտի տիրէ Աստուծոյ կառավարութիւնը, ինչպէս որ գրուած է. «Հասցա աղքատին դատը արդարութեամբ պիտի տեսնէ, ու երկրին զրկուածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ. եւ իր բերնին դաւազանովը երկիրը պիտի դարնէ, ու իր շրթունքներուն հողիովը ամբարիշտը պիտի մեռցնէ»-- Եսայ. ԺԱ. 4:

տովանի թէ՛ բոլոր ազգերու ժողովուրդները կը հարստահարուին ու կը տառապին: Ո՞վ է այդ տառապանքներուն պատասխանատուն: Տեսանելի իշխանները իրենց եսասիրութեամբը չափով մը մեղադրելի են այդ բանին համար, սակայն այդ տառապանքներուն գլխաւոր պատասխանատուն Բանասերիու Սատանան է: Անիկա՛ է այս աշխարհի աստուծո՛ր կամ աներևոյթ իշխանը: Եհովան կը յայտարարէ թէ Ինք պիտի փճացնէ Սատանային զօրութիւնը եւ ամէն իշխանութիւն պիտի խլէ անկէ: Գրուած է. «(Անիկա) ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ, տնանկին դաւակները պիտի ազատէ, ու բռնաւորը պիտի ջարդէ» (Սաղմ. 26. 4): Այդ բոլոր կառավարութիւններուն կամ ազդու-թիւններուն հետ պիտի իյնայ նաև Ամերիկայի կառավարութիւնը, ինչու որ ան բոլոր միւսներուն նման եսասիրական է: Բոլոր եսասիրական կառավարութիւնները պարտին տեղի տալ Աստուծոյ արդարադատ կառավարութեան, որուն գլուխը Քրիստոս պիտի ըլլայ: Եսասիրական կառավարութիւնները այլևս երկար չեն կրնար մնալ: Երբ մարդիկ իրական ճշմարտութեան տեղեկանան՝ իրենք պիտի ուրախանան ոսեսասէր ու ամբարիշտ ազգերը մէջտեղէն պիտի վերնան: Ո՞վ է այն անկեղծ մարդը որ պիտի ուղէ միշտ կեղեքիչ ու ամբարիշտ իշխանութեան մը տակ ապրիլ: Անկատար կառավարութիւններուն անհետանալը ժողովուրդին օրհնութիւն մը պիտի ըլլայ: Եհովա Աստուած սէր է եւ Քրիստոս Յիսուս Անոր բուն պատկերն է: Քրիստոս է երկրիս նոր Վեհապետը ու Նա արդարութեամբ պիտի իշխէ, որ կը նշանակէ թէ Անոր իշխանութիւնը սիրով՝ եւ ոչ թէ եսականգրութեամբ՝ յառաջ պիտի տարուի: Ահա այդ կերպով պիտի տիրէ Աստուծոյ կառավարութիւնը, ինչպէս որ գրուած է. «Հապա աղքատին դատը արդարութեամբ պիտի տեսնէ, ու երկրին զրկուածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ. եւ իր բերնին դաւաղանովը երկիրը պիտի զարնէ, ու իր շրթունքներուն հողիովը ամբարիշտը պիտի մեռցնէ»-- Եսայ. ԺԱ. 4:

Թող ժողովուրդները խրախուսուին այն իրողութեամբը թէ՛ անարդար կառավարութիւնները այլևս երկար պիտի չկրնան կեղեքել մարդկութիւնը: Աստուած երկիրը ստեղծեց որ մարդը անոր վրայ ապրի խաղաղութեամբ ու երջանկութեամբ, եւ ինք դուռնի պիտի հանէ իր այդ նպատակը: Սակայն՝ արդարութիւնն ու աննսասիրութիւնը երկրիս վրայ կատարելապէս տիրելէն առաջ՝ բացարձակօրէն անհրաժեշտ է որ բոլոր անարդար կամ ետասէր ազգերը յաւիտեան բնաջրնջուին: Ուստի Աստուած կը յայտարարէ թէ ինք վճռած է այս ետասէր իշխաններուն օրով իր կառավարութիւնը հաստատել ու բոլոր անարդար ազգերը ջարդ ու փշուր ընել (տես Դան. Բ. 44): Այն ատեն արդարութեան ու սիրոյ կառավարութիւնը յաւիտեան Քրիստոսի ուսերուն վրայ պիտի բլլայ, եւ անոր ընծայած խաղաղութիւնն ու օրհնութիւնները վերջ պիտի չունենան-- Եսայ. Թ. 6, 7:

Եսասիրութիւնն էր որ մարդիկ մղեց Յիսուսը հալածելու՝ երբ Նա երկրիս վրայ էր: Անիկա սուրբ ու անարատ էր եւ բարիքերու մարդոց: Կղերներն էին որ այն ատեն Յիսուսի դէմ մղուած հալածանքը ղեկավարեցին: Յիսուս անոնց երեսն խմբեր սաւ-թէ իրենք Սատանային իշխանութեան տակ էին (Յովհ. Ը. 44): «Քրիստոսնայ Աշխարհ»-ի մէջ եղող անոնց համամաններն ալ նոյն դործով ըդրաղուած են: Ես ասիկա կը յիշեմ ցոյց տալու համար թէ՛ Աստուծոյ Սօսքին մասին վկայելով հաւատարմօրէն Քրիստոս Յիսուսի հետեւողները ինչո՛ւ կղերներուն ձեռքէն նեղութիւն կը կրեն ներկայիս: Կղերները այնպէս կը յայտարարեն թէ իրենք Աստուծոյ կը ծառայեն. բայց անոնք Աստուծոյ չեն ծառայեր: Եթէ անոնք Եհովա Աստուածը սիրող ըլլային, Անոր պատուէրները պիտի պահէին՝ ժողովուրդին երթալով ու անոնց ըսելով թէ Աստուծոյ Թաղաւորութիւնը մօտեցած է եւ թէ Թաղաւորութիւնը իրենց միա՛կ յոյսն է: Անոնք ոչ միայն ճշմարտութիւնը չեն քարոզեր ժողովուրդին՝ հապա նաև եսասիրական պատճառներով կը հա-





ՔԱյն թողաւորներուն օրերը երկինքի Աստուածը թողաւորու-  
թիւն մը պիտի հանէ՝— Դան. Բ. 44, տես էջ 60-ը:

լածեն Տիրոջը պատգամը տարածող այրերն ու կիները: Այդ կղերները մաս կը կազմեն այն աշխարհին, որուն վրայ Սատանան կ'իշխէ եւ որ մօտ ատենէն պիտի կործանի: Այդ աշխարհին կողմէ իր հաւատարիմ հետեւորդներուն հալածուիլը նախաձայնեց Յիսուս սա խօսքերով. «Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտե՛ք որ ձեզմէ առաջ զիս ատեց: Եթէ աշխարհէն եղած ըլլայիք, աշխարհ խրենները կը սիրէր. բայց որովհետեւ աշխարհէ չէք, հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ: Միտքերնիդ բերէք այն խօսքը զոր ձեզի ըսի թէ Ծառան իր տիրոջմէն մեծ չէ. եթէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն. եթէ իմ խօսքս պահեցին, ձերն ալ պիտի պահեն: Բայց այս ամէն բաները պիտի ընեն ձեզի իմ անուանս համար, վասն զի չճանչցան զանիկա որ զիս զըրկեց»-- Յովհ. ԺԵ. 18--21:

Եհովայի Վկաները զԱստուած սիրելնուն եւ ատոր որպէս ապացոյց Անոր պատուէրները պահելնուն համար՝ ձեր տուներն ու խանութները կուզան եւ Անոր Խօսքը բացատրող գիրքեր կը ցուցադրեն ձեզի: Ս. Գրոց մէջ գտնուած ու ձեզի բացատրուած այդ վսեմ ճշմարտութիւնները կը զայրացրնեն Սատանան ու անոր երկրային ներկայացուցիչները, որոնք անձնասիրական պատճառներով կը հալածեն Եհովայի հաւատարիմ Վկաները: Սատանային ներկայացուցիչները այս հալածանքը յառաջ կը տանին բացորոշապէս իրականացնելով Յիսուսի վերոյիշեալ մարդարէութիւնը: Այս պատճառաւ՝ Եհովայի Վկաները ամենեւին չեն յուսալքուիր: Անոնք համբերութեամբ ու սիրով յառաջ կը մղեն ճշմարտութիւնը թողովուրդին մէջ տարածելու իրենց դործը:

Այժմ թող բոլոր բարեացակամ մարդիկը խրախուսուին: Բովանդակ իրողութիւնները Ս. Գրոց լոյսովը ամէն կասկածէ վեր ցոյց կու տան թէ՛ բոլոր եսասէր կառավարութիւնները շատ չանցած յաւիտենապէս պիտի դադրին դոյութիւն ունենալէ: Աշխարհը այն ատեն սիրով պիտի կառավարուի եւ

Աստուած մշանջնական օրհնութիւններ պիտի ընծայէ մարդկութեան: Եհովան կը յայտնէ թէ այն տանն զի՛նք սիրողները պիտի բանն. «Ով Տէր, դուն հաւնեցար քու երկրիդ ... Պիտի լսեմ ինչ որ կը խօսի Տէր Աստուած. վասն զի նա խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովուրդին ու սուրբերուն. բայց մի թողուր որ անոնք կրկին յիմարութեան դառնան: Արդարեւ իր փրկութիւնը մօտ է իրմէ վախճողներուն, որպէս զի մեր երկրին մէջ փառք բնակի: Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատահեցան, արդարութիւնն ու խաղաղութիւնը զիրար համարուեցին: Ըշմարտութիւնը երկրէն պիտի բուսնի, ու արդարութիւնը երկրինքէն վար պիտի նայի: Նաև Տէրը բարութիւն պիտի տայ, ու մեր երկիրը իր պատուը պիտի տայ: Արդարութիւնը անոր առջևէն պիտի երթայ, ու դժեղ իր քայլերուն մէջ պիտի դնէ»-- Սաղմ. 26. 1, 8--13 (տես անգլերէն Ս. Գիրքը):

Դարերու մեծ ճգնաժամը եկած հասած է: Եսասիրութիւնն ու ամբարշտութիւնը վերջ պիտի գանեն ու այդ ճգնաժամային շրջանին արդարագատ իշխանութիւնը պիտի սկսի ու յաւիտեան պիտի մնայ: ՁԱստուած սիրող այրերու եւ կիներու հալածանքի եւ նեղութեան շրջանը այլեւս պիտի դադրի՝ եւ պիտի սկսի անոնց անվերջ երջանկութեան շրջանը, ինչու որ Աստուած խոստացած է յաւիտեան պահել եւ օրհնել անոնք՝ որ զի՛նք կը սիրեն ու իրեն կը ծառայեն: Եհովան այժմ այս ճշմարտութիւնները ձեզի կը ներկայացնէ՝ որպէս զի դուք պատահութիւն ունենաք գիտնալու թէ ի՛նք է համայն երկրի վրայ Ամենակալ Աստուածը եւ թէ ի՛նք սէր է:

## Դ Ի Տ Ա Ր Ա Ն Ը

ԴԻՏԱՐԱՆԸ Եւ Քրիստոսի Անբկայութեան Մու-  
Անտիկը-- Ասիկա՛ Նհուլայի Վկաներուն Հայկական  
Մասնաճիւղին 16 էջոց պաշտօնական ամսաթերթն  
է: 1921-էն ի վեր՝ ան կը հրատարակէ հոգեւոր, դի-  
տական, բարոյական եւ առողջապահական ընտիր  
ու ժամանակայարմար յօդուածներ:

Այս պարբերաթերթն ալ, ինչպէս մեր դերքերն  
ու դրօշակները (տես էջ 49-ը), Դատաւոր Բըթչըր-  
Փորտի հեղինակութեամբ հրատարակուած անգլի-  
րէն բնագրին թարգմանութիւնն է, ուր մասնաւո-  
րապէս կը պարզարանուի՝ թէ՛ Հայերու եւ թէ՛ միւս  
բոլոր ազգերու ճշմարիտ ազատագրութեան ու տե-  
ւական երջանկութեան համար Աստուծոյ ունեցած  
նպատակները, եւ զանոնք արագապէս դործադրելու  
համար՝ ներկայիս Նհուլայի դործածած միջոցները:  
Ներկայ ճշմարտութիւնը փնտոող մը շատ յառաջ  
չկրնար երթալ իր խուշարկութեանց մէջ՝ առանց  
ԴԻՏԱՐԱՆ-ի օգնութեան:

Մեր ազգայինները մասնաւոր հետաքրքրու-  
թեամբ կը կարդան՝ եւ մեծապէս կ'օգտուին ԴԻ-  
ՏԱՐԱՆ-ին առողջապահական յօդուածներէն, քան-  
զի այդ յօդուածները տգէտ ու դրամ քաշող գեղա-  
դարման բժիշկներու (մէտիքըլ տաքըր) դաղա-  
փարները չեն, հապա բնարուծական եւ խղճամիտ  
գիտնականներու փորձառարար դտած ամենալիւր-  
ջին ճշմարտութիւնները:

Այնիւ հայորդի, եթէ դուք ալ կ'ուզէք օգտուիլ  
այս թերթին մատուցած ազգասիրական եւ անեռա-  
սիրական ծառայութենէն, ժամ առաջ բաժանոր-  
դագրուելու փափաքնիդ յայտնեցէք մեզի:

ԴԻՏԱՐԱՆ-ին տարեկան բաժնեդրինն է՝ միայն  
\$1.00 Ամերիկայի, եւ \$1.50 արտասահմանի հա-  
մար. իսկ ան ճրի կը դրկուի՝ հետաքրքիր եւ ան-  
կեղծ կարօտեալներուն:

Նամակ կամ դրամ դրկուելու է ԴԻՏԱՐԱՆ-ի  
անուան եւ հասցէին, որն է հետեւեալը.

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063209

15

A	I
18912	

